

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ»
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ
ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

(Ժիրայր Լիպարիտյանի
«Հայաստան-Թուրքիա. պետականություն,
պատմություն, քաղաքականություն»
գրքի թուրքագիտական գրախոսություն)

ԵՐԵՎԱՆ – 2022

ԻՆՉՈ՞Ւ ԳՐԱԽՈՍԵԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ

2021թ. վերջին հրապարակվեց և Հայաստանում հանրային ու քաղաքական որոշակի շրջանակների ներկայացվեց Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի նախկին գլխավոր խորհրդական, հատուկ հանձնարարություններով ՀՀ դեսպան, ՀՀ արտաքին գործերի նախարարի նախկին առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանի «Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն» վերնագրով գիրքը¹: Նախ՝ ուզում եմ ուրախությամբ արձանագրել, որ գիրքը հայերենի երկու տարբերակներով է՝ և՛ արևելահայերեն, և՛ արևմտահայերեն: Ինչպես հայտնի է, Ժիրայր Լիպարիտյանը Հայաստանի Հանրապետության գոյության առաջին տարիներին որոշակի և պատասխանատու դերակատարում է ունեցել հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում: Ինձ համար՝ որպես թուրքագետի, իրոք, հետաքրքիր և ինչ-որ տեղ պարտադիր էր ծանոթանալ այս գրքին, որտեղ ամփոփված են Լիպարիտյանի հայացքները, կողմնորոշումները, որոնք տարիների ընթացքում ավելի են բյուրեղացել: Գրքում Լիպարիտյանի տարբեր տարիներին հրապարակված հոդվածներն են, ելույթները, հարցազրույցները, որոնց երբեմն հեղինակն ավելացրել է բացատրություններ, ներածություն կամ հետգրություն: Փաստորեն՝ կարելի է ենթադրել, որ գրքում հեղինակը ներառել է հատկապես այն նյութերը, որոնցում արտահայտած համոզմունքներում ավելի հաստատակամ է դարձել տարիների ընթացքում: Նյութերի մեծ մասը գրված է 1998 թվականից հետո, ինչի մասին նշում է հեղինակը նախաբանում², այսինքն՝ նրա պաշտոնավարումից հետո և ոչ թե քաղաքական՝ հաճախ ակտիվ թոհուբոհի

¹ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, Երևան, 2021:

² Նույն տեղում, էջ 11:

մեջ գրված նյութեր, թեզեր են, այլ արդեն ինչ-որ առումով հանգիստ, վերարժևորումներով լի, ինչը մի կողմից ավելի հետաքրքիր է դարձնում աշխատանքը, մյուս կողմից՝ մտահոգության պատճառ դառնում, որ նման թեզերը կարող են լինել մի մարդու գիտաքաղաքական հավատամքը, որը որոշակի շրջանում Հայաստանի շահերի սպասարկմանն է կոչված եղել:

Գրքում փաստորեն փորձ է արված տալ Հայաստան-Թուրքիա և ընդհանուր վերցված հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը՝ առավելապես շեշտը դնելով Հայաստանի անկախացումից հետո տեղի ունեցած գործընթացների վրա: Բնականաբար, աշխատանքում քննարկվում են Հայոց ցեղասպանության, արցախյան, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների խնդիրները:

Նախ՝ նկատենք, որ Ժիրայր Լիպարիտյանը և գրքում, և հանրային ելույթներում, մեր կարծիքով, փորձում է դիրքավորվել առավելապես որպես օբյեկտիվ պատմաբան և մեծ փորձառություն ունեցող պետական նախկին պաշտոնյա, դիվանագետ, սակայն ակնհայտ է նրա գերքաղաքականացված լինելը. նրան չի հաջողվում թաքցնել իր քաղաքական հայացքները, կողմնորոշումները, անձնական հակակրանքը որոշ գործիչների հանդեպ: Խնդիր կա նաև գրքի ժանրի հստակեցման հետ կապված. սա ակադեմիական աշխատություն է, քաղաքական գործչի հուշեր են, կողմնակալ փորձագետի վերլուծություն է, թե՛ նախկին իշխանության մաս կազմած պաշտոնաթող անձի անսխալականության ապացույցի փորձ: Չնայած ինքը՝ հեղինակն իր գրքի մասին նշում է. «Այնպեղ ընթերցողը կգտնի մեզ հուզող հարցերի համապարփակ ու համակարգային վերլուծություն և հիմնավորում՝ **զերծ գաղափարախոսական զեղումներից ու քաղաքական նկատառումներից** (ընդգծումը մերն է – Ռ.Մ.)»³:

Լիպարիտյանի գրքին ծանոթանալը, բացի վերը նշված ժանրային հստակեցման հետ կապված հարցերից, առաջին հերթին

³ Ժ. Լիպարիտյան, Մի քանի խոսք «քննադատների» մասին, Առավուտ, 21, 12, 2021:

ինձ համար այնպիսի տպավորություն առաջացրեց, որ պետական աշխատանքի փորձի վրա հենված վերլուծությունում կան առնվազն երկու կարևոր և աչքի զարնող թերություններ. առաջին՝ Թուրքիայի իմացության որոշակի պակաս և երկրորդ՝ միտումնավոր Թուրքիայի ոչ իրական ու ցանկալին որպես իրականություն ներկայացնելուն միտված պատկեր ստանալու ջանք:

Պետք է փաստեմ, որ գոնե նեղ մասնագետների համար աչքի են զարնում Ժ. Լիպարիտյանի և նրա «ուսմունքի» հանդեպ Հայաստանում այս պահին իշխող ուժի առնվազն որոշակի հատվածի համակրանքը և լիպարիտյանական թեզերի ուղղակի կամ անուղղակի կիրառման փաստը: Այսպես, իր գրքի շնորհանդեսից հետո Լիպարիտյանն ընդունվեց ՀՀ ԱԺ-ում իշխող խմբակցության կողմից և այնտեղ բանախոսեց հայ-թուրքական հարաբերությունների իր տեսության և երկի թե ներկայիս զարգացումների մասին: Հանդիպումից հետո իշխող թիմի որոշ ներկայացուցիչներ նաև վիզուալ բերկրանքի դրսևորումներ ունեցան՝ ժպիտներ, հարզանքի ցուցադրումներ, իսկ ավելի ուշ իշխող խմբակցության պատգամավորներից ոմանք ՀՀ ԱԺ ամբիոնից, հայկական լրատվամիջոցներով, ֆեյսբուքյան գրառումներում սկսեցին անել այնպիսի հայտարարություններ՝ կապված հայ-թուրքական և արցախյան խնդիրների հետ, որոնք ուղղակի ավելոժեցին գիտակից հասարակության շատ շերտերի. սակայն հրապարակ նետված այդ գաղափարները «զարմանալի» զուգադիպությամբ համընկնում են Ժ. Լիպարիտյանի թեզերին, իսկ որոշները բառացի մեջբերումներ են: Ընդ որում, կարելի է ենթադրել, որ այդ թեզերը որոշակի մշակմամբ հրամցվում են քաղաքական գործիչներին, որոնք դրանք ընթերցում կամ բարձրաձայնում են ԱԺ ամբիոնից, մամուլով, սակայն խնդրի մանրամասներին ակնհայտորեն չեն տիրապետում. դրանցից է, օրինակ, իբրև թե «հայկական ինքնության հիմքը կազմող թուրքատյացությունը»: Այս ամենն ինչ է նշանակում՝ պետական

քարոզչամեքենայի և վերլուծական կենտրոնների, back office-ների կողմից մշակված լիպարիտյանական թեզերը լայնորեն տարածվում են և մի կողմից դառնում իշխանության՝ այդ թվում և արտաքին աշխարհին հղվող մեսիջներ, մյուս կողմից՝ ապակողմնորոշում են հայ հասարակության մի մասին, հատկապես Երևանից դուրս և հիմնականում պետական լրատվամիջոցներին հետևողներին: Սրանք, թույլացնելով հասարակության զգոնությունը, դառնում են բառիս բուն իմաստով հասարակական անվտանգության խնդիր, քանի որ ադրբեջանական բանակն իրականացնում է ցեղասպանական պատերազմ հայկական բանակի և քաղաքացիական անձանց հանդեպ՝ օկուպացնելով ոչ միայն Արցախի, այլև ՀՀ սուվերեն տարածքը, իսկ Լիպարիտյանը բառացիորեն ասում է. *«Ես Ադրբեջանից և Թուրքիայից վրանգ չեմ տեսնում»:*

Կարող ենք հստակ ասել, որ ինքը՝ Լիպարիտյանն իրեն դիրքավորում է որպես գերիրատես վերլուծաբան և փորձում է խնդիրներին մոտենալ միայն ու միայն պրագմատիզմի և ռեալիզմի դիտանկյունից: Սա, բնականաբար, չենք կարող գնահատել բացասաբար, և ես ինքս էլ կողմ եմ իրատեսությանը, ավելորդ պաթոսի և սենտիմենտալության գերդոզավորումից խուսափելուն: Սակայն կա իրատեսություն, և կա իրատեսության պատրանքի տակ հասարակության հանդեպ կիրառվող շանտաժ, որում կիրառվող դրույթները սերտորեն առնչվում են հակահայաստանյան շահերի հետ: Բայց եթե Լիպարիտյանն իրեն դիրքավորում է որպես պրագմատիկ վերլուծաբան, ապա որոշ շրջանակներ նրան ներկայացնում են որպես ճշմարտություններ ասելու համարձակություն ունեցող մտավորական: Այդ առումով, ցանկանում եմ մեջբերել ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հողվածից մի հատված, որտեղ խոսելով մտավորականների մասին՝ նա շեշտում է. *«Ցավով պետք է նշեմ, որ անկախությունից ի վեր՝ Ռաֆայել Իշխանյանից, Վանո Սիրադեղյանից, Ժիրայր Լիպարիտյանից, Սևակ Արամազդից և*

Տիգրան Պասկևիչյանից բացի, հանրային ճանաչում ունեցող որևէ այլ մտավորական չեղավ, որ քաջություն ունենար ճշմարտությունն ասել ժողովրդին»⁴: Ես հույս ունեմ, որ առաջին նախագահը և գիտությունների դոկտոր, արևելագետ Լևոն Տեր-Պետրոսյանը ճշմարտություն ասելով նկատի չի ունենում Ժիրայր Լիպարիտյանի Թուրքիայի պատմության և իրականության աղավաղված ընկալումները, ոչ ճիշտ ձևակերպումները և դրանք հայ հանրությանը կիսավիրավորական շեշտադրումներով ներկայացնելը, որոնց մասին հանգամանալից խոսելու եմ ստորև:

Եվ վերջինը՝ ջերմեռանդորեն քննադատելով Հայաստանի կողմից ոչ թուրքահաճո քաղաքականություն որդեգրելու ցանկացած դրսևորում և հատկապես պահանջատիրության գաղափարը՝ Լիպարիտյանը, նրա հետևորդները և որոշակի քաղաքական գաղափարախոսության կրողներ պիտակավորում են այդ մտածողությունը և դրանց կրողներին, ընդ որում՝ տերմիններով, որոնք ավելի շատ քաղաքական են, քան գիտական. դրանց մեջ ամենատարածված և մեղմ տերմիններից են «հայդատական»-ը, «ոչմիթիզական»-ը: Այս առումով շատ հետաքրքիր է «Առավոտ» թերթի խմբագիր Արամ Աբրահամյանի առաջ քաշած, ըստ էության, հոետորական հարցը, որը հենց վերաբերվում է ըստ հայացքների իրարից տարբերվող գիտնականներին և նրանց բանավեճերին. *«Բնականաբար, չեմ պարտաստվում խառնվել հեղինակավոր գիտնականների վեճին՝ չնայած մինչև վերջ չեմ հասկանում, թե ինչու պահանջատերը չի կարող լինել պրագմատիկ, և ինչո՞ւ պրագմատիկը պարտադիր պետք է լինի ապագային կամ անսկզբունքային»⁵*: Ըստ Աբրահամյանի իրավացի դիտարկման. *«Մինչդեռ ես ուզում եմ լսել հենց ակադեմիական և*

⁴ Լևոն Տեր-Պետրոսյան, Թող բանավիճեն Լեոյի հետ, <https://www.24news.am/news/222776>

⁵ Աբրահամյան Ա., Ինչպես հաղթահարել «հայդատականների» և «պրագմատիկների» հակասությունը, Առավոտ, 23, 03, 2022:

համալսարանական շրջանակներից՝ պե՛րք է արդյոք գնալ Ադրբեջանի և Թուրքիայի հետ կարգավորման՝ նրանց առաջարկած պայմաններով, թե՛ ոչ: Իհարկե, պատասխանը պե՛րք է հասունանա բանավեճի մեջ: Բանավեճի, ոչ թե լեզվակովի»⁶:

Երևի թե առաջնորդվելով մարքեթինգային նկատառումներով՝ Լիպարիտյանը Երևանում իր գրքի շնորհանդեսից հետո դիմելով լրագրողներին՝ նրանց միջոցով գովազդում էր իր գիրքը և խորհուրդ տալիս կարդալ այն: Սակայն ես ավելի շատ կարևորում եմ Լիպարիտյանի հետևյալ միտքը. «Միշտ գոհացում եմ ստանում, երբ մտածումներս քննարկվում են, եւ երբ քննադատություններն ու գնահատականները լուրջ են: ...Քաղաքակիրթ ու լուրջ քննարկումը միշտ էլ օգտակար է բոլորիս համար»⁷: Ուստի, առաջնորդվելով իմ մասնագիտական պատասխանատվության զգացումով, անսալով Ժ. Լիպարիտյանի խորհրդին կարդալ իր գիրքը, ինչպես նաև հույս ունենալով հեղինակին հասցնել իմ օբյեկտիվ քննադատությունները՝ որոշեցի հանգամանորեն անդրադառնալ «Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն» գրքին:

⁶ Աբրահամյան Ա., Գաղափարների դեֆիցիտ, Առավոտ, 16, 03, 2022:

⁷ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, էջ 406:

ԿԱՏԵԳՈՐԻԿ ԹԵԶԵՐԻ ԱՌԱՏՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպես, սկսելով իմ հեռակա և հնարավորինս ակադեմիական բանավեճը Ժիրայր Լիպարիտյանի հետ՝ նկատեմ, որ գրախոսվող աշխատանքն առաջին հերթին աչքի է ընկնում կատեգորիկ գնահատականներով, որոնք թույլ չեն տալիս ներկայացնել օբյեկտիվ պատկեր: Գրքի հենց սկզբում Լիպարիտյանն անդրադառնում է իր թեզերից մեկին, որը, շատ կարևոր իրողություններ անտեսելուց բացի, նեղացնում է հարցի էությունը և բացառում այլընտրանքները. այսպես, Լիպարիտյանը հարցնում է, թե արդյոք հնարավոր է անկախ Հայաստան պետության գոյություն և իր այդ հարցադրումը հիմնավորում է հետևյալով. «Այս հարցը կը բարձրանայ, որովհետև մեր մօտ բառականին արմատացած է հետևեալ մօտեցումը կամ անոր մէկ տարբերակը. (ա) – Թուրքիան եւ թուրք ժողովուրդը անուղղելիորէն եւ իրենց էութեամբ իսկ ոճրագործ են, եւ (բ) անոնք առիթի կը սպասեն Առաջին Համաշխարհային Պատերազմին Արեւմտահայաստանի հայութեան դէմ գործած ոճիրը շարունակելու Արեւելահայաստանի տարածքին վրայ: Հետեւաբար, ըստ այդ մօտեցման, հայութեան եւ հայ որեւէ պետականութեան առջեւ կը ծառանայ մէկ տիրապետող շահ. գոյութիւն ունենալու հարցը, որուն պէտք է ենթարկուին մնացեալ բոլոր իրական կամ պատկերացուած շահերը: Իսկ այդ հիմնական շահը կարելի է սպահովել միայն անելի մեծ ուժի մը՝ Ռուսիոյ պաշտպանութեան տակ»⁸: Այս ոճով կամ դիտանկյունից հարցը դնելը ինքնին խնդրահարուց է և իր կատեգորիկությամբ թույլ չի տալիս ավելի բազմակողմ քննարկում և ստիպում անմիջապես հակադարձել հետևյալ փաստարկներով՝ ա/ թուրքերը կամ Թուրքիան հայերի դեմ ցեղասպանական քաղաքականություն շարունակել են նաև Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1919-1923թթ. քեմալական շարժման ժամանակ, բ/ Թուրքիան ցե-

⁸ Նույն տեղում, էջ 16:

ղասպանական քաղաքականություն է վարել 1920թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ արդեն Հայաստանի առաջին Հանրապետության տարածքում և մասնավորապես Ալեքսանդրապոլի նահանգում, գ/ Թուրքիան այդ նույն ոճը փորձել է կիրառել նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին իր երկրի քաղաքացի հայերի հանդեպ, դ/ Հայաստանը և հայությունը որպես թշնամի ընդգրկված են այդ պետության և հասարակության ընկալման մեջ, որը դրսևորվում է պետական, անվտանգային հայեցակարգերի մեջ, ինչպես նաև սոցիալոգումներում, ե/ սկսած 1991թ.⁹ Թուրքիան Հայաստանի դեմ պատերազմի փաստացի կողմ է, և դրա ապացույցներից են նրա ռազմական, քաղաքական քայլերը, ՀՀ տնտեսական շրջափակումը, պաշտոնական հոետորաբանությունը, գ/ 2020թ. պատերազմը և հետագա թուրք-ադրբեջանական համատեղ ագրեսիաներն ունեն ցեղասպան բնույթ, որի ապացույցներից են հայ զինվորների և քաղաքացիական անձնաց ռիտուալային մահապատիժները, կտտանքները, նվաստացումները, և սրանք կարելի է համարել լիպարիտյանական վերոնշյալ «թուրքերը առիթի կը սպասեն Առաջին Համաշխարհային Պատերազմին Արեւմտահայաստանի հայութեան դէմ գործած ոճիրը շարունակելու Արեւելահայաստանի տարածքին վրայ» տեսական կարծիքի գործնական իրականացում, է/ Թուրքիան բացահայտ ներգրավված է հայ գերիների չվերադարձման քաղաքականության մեջ, ինչի ապացույցներից է օկուպացված տարածքներում Իլիամ Ալիևի, Էրդողանի և նրա տիկնոջ՝ Էմինե Էրդողանի զրույցը հայ գերիների առկայության և նրանց որպես պատանդ դիտարկելու վերաբերյալ⁹:

Իսկ Լիպարիտյանի վերը նշված մտքի վերջին հատվածը վերաբերում է պետության անվտանգության կամ գոյության հարցին, որը հուզում է աշխարհի գրեթե բոլոր պետություններին: Այն, ինչում Հայաստանին մեղադրում է Լիպարիտյանը՝ ասե-

⁹ Թաթյանը ԵՄ ղեկավարությանն է ուղարկել Ալիևի և Էրդողանի կնոջ զրույցի տեսանյութը, <https://www.azatutyun.am/a/31325336.html>

լով «տիրապետող շահ», արդյոք դրա վրա հենված չէ տարբեր ռազմաքաղաքական բլոկների ձևավորման տրամաբանությունն ինչպես անցյալում, այնպես էլ հիմա: Ամբողջ մարդկության, պետականությունների պատմությունը հենց գոյությունը պահելու, անվտանգությունն ապահովելու պատմություն է, և այն պետությունը, որը դա չի կարողացել անել, տապալվել է և դուրս եկել պատմության թատերաբեմից: Արդյո՞ք սա մեղադրանք է, որը կարող է հնչեցնել փորձառու պաշտոնյան և վերլուծաբանը: Հենց նույն Թուրքիան ինչո՞ւ, ինչպե՞ս և ինչի՞ց ելնելով է դարձել ՆԱՏՕ-ի անդամ 1952-ին. ԽՍՀՄ-ից բխող գոյութենաբանական վտանգը չեզոքացնելու համար, ԽՍՀՄ հողային և այլ պահանջները, պատերազմի սպառնալիքը կասեցնելու համար: Փաստորեն, ըստ Լիպարիտյանի տրամաբանության, Թուրքիայի համար էլ Ռուսաստանը կամ ԽՍՀՄ-ը նույն հավաքական, երևակայական և այլ թշնամու կերպարն է եղել, ինչ Հայաստանի համար հիմա Թուրքիան է, և որպես այդ հարցի լուծում նա գտել է անվտանգային հարթակ, բանաձև՝ ի դեմս արևմտյան բլոկի և ՆԱՏՕ-ի: Ինչն է այստեղ զարմանալի, սա է պատմության, քաղաքականության, քաղաքագիտության տրամաբանությունը, և ինչո՞ւ է Լիպարիտյանը սա ներկայացնում որպես զուտ «երևանյան» կամ հայկական ֆենոմեն կամ հիվանդություն: Ավելի պարզ ասած՝ Հայաստանը պարտավոր է գտնել իր անվտանգային հարթակը, և դա պետական գործիչների ամենաբնական պարտքն ու քայլն է, ոչ թե վախը, ինչպես նշում է Լիպարիտյանը:

Շարունակելով իր կատեգորիկ վերլուծությունը և այլ կարծիքի գոյությունը բացառելով՝ Լիպարիտյանը պատասխանում է իր իսկ ձևակերպած հարցին, որ եթե Թուրքիային ընդունում ենք որպես «անուղղելի ցեղասպան», ապա. *«Այս ձեռով դրուած հարցումին պատասխանն ալ պարզ է: Եթե Թուրքիոյ էութեան ու անխուսափելի վերաբերմունքի մասին այս վերագրումը ճիշդ է, մենք չենք կրնար անկախ պետականութիւն ունենալ: Եթե սխալ*

ենք, եւ կան Թուրքիոյ ու թուրք ժողովուրդին մասին մտածելու այլ ձեւեր, անկախ պետականութիւն մը կարելի կը դառնայ»¹⁰: Այսինքն՝ անկախ Հայաստան, ըստ այս տրամաբանության, կարող է լինել միայն Թուրքիայի և թուրքերի հանդեպ մեր ընկալումները փոխելու միջոցով: Լավ, ենթադրենք տեսականորեն մենք փոխեցինք մեր մտածելակերպը, սակայն ավելի կարևոր հարց է մնում. իսկ Թուրքիան, ըստ Լիպարիտյանի, ինչպիսի պետություն է, արդյո՞ք նրա հասարակության և իշխանության մեջ գերիշխող չէ ծայրահեղության հասնող ազգայնականությունը, և արդյո՞ք նա պատրաստ է փոխել իր հակահայկական քաղաքական ու հասարակական մտածելակերպը: Ահա այդ պատասխանն է, որ կարծես չկա գրքում. դիցուք՝ ընդունենք, որ մեր՝ հայկական պատկերացումները Թուրքիայի մասին հին են, կարծրացած են, իսկ ճիշտ է Թուրքիան ըստ Լիպարիտյանի՝ լուսավոր, ժողովրդավար, այլ մշակույթների հանդեպ հարգանքով:

Լիպարիտյանը հարց է բարձրացնում. «*Ինչպէ՞ս հասանք այն իրավիճակին, որ մեր դիրքորոշումները կը հիմնենք մէկ դրոյթին վրայ. այն, ինչ Թուրքիոյ համար լաւ է, մեզի համար վատ է, եւ որեւէ բան, որ Թուրքիոյ համար վատ հետեւանքներ ունի, մեզի համար անպայմանօրէն օգտակար է: Նման ուղեցոյցը ապակողմնորոշող է եւ մեզի համար վնասակար*»¹¹: Իր այս քիչ հիմնավորված կամ կատեգորիկ պնդումները փաստարկելու համար Լիպարիտյանն ընտրել է, թերևս, իր համար ամենաանհարմար օրինակը. նա պնդում է, թե Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությանը դեմ են եղել Սփյուռքի և Հայաստանի տարբեր կուսակցություններ և կազմակերպություններ և սա համարում է սխալ, քանի որ Եվրամիության անդամ Թուրքիան «*նուազ վրանգատոր պիտի ըլլար Հայաստանին համար*»: Ընդունելով այս մեկնաբանության իրավացիությունը՝ պետք է նշել, որ Հայաս-

¹⁰ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, էջ 16:

¹¹ Նույն տեղում, էջ 19:

տանի իշխանություններն առավելապես առաջնորդվել են հենց այդ նկատառումներով և Թուրքիայի Եվրամիության անդամակցության գործընթացի դեմ պայքարելը դրված չի եղել Հայաստանի պաշտոնական արտաքին քաղաքականության հիմքում, սակայն Հայաստանը պնդել է, որ Եվրամիությանն անդամակցել հավակնող երկիրը պետք է քաջություն ունենա առերեսվել իր պատմության, տվյալ պարագայում՝ Հայոց ցեղասպանության փաստի հետ և ճանաչել այն: Եվ, օրինակ, կարող ենք այսպիսի զուգահեռ տանել. արդյո՞ք Եվրամիության լիարժեք անդամ կարող էր ընկալվել Գերմանիան եթե առերեսված չլիներ իր պատմության ամոթալի էջի՝ Հոլոքոստի հետ: Ի դեպ, Եվրամիությանը Թուրքիայի հնարավոր անդամակցության մասին խոսելիս Լիպարիտյանը սկսում է որոշ մտքեր արտահայտել, որոնք կարծես թե հակասում են իր այլ մտքերին և, մասնավորապես, այն թեզին, թե Թուրքիան վտանգ չէ Հայաստանի համար: Այսպես, նա հարցնում է, թե հայերի համար որ Թուրքիան է առավել վտանգավոր. «Այն Թուրքիան, որուն պետական ու արժեքային համակարգը սկսած էր մօտենալ երոպականին, **թե՛ այն, ինչ կա այսօր (ընդգծումը մերն է – Ռ.Մ.)**»¹²: Այստեղ արդեն մեր հերթն է Լիպարիտյանին հռետորական հարց տալու. իսկ ի՞նչ կա այսօր, ինչպիսի՞ն Թուրքիա է այսօր, և եթե այն եվրոպական արժեքներից հեռու է որպես պետություն, արդյո՞ք հենց միայն դա չի ապացուցում իր հարևան երկրների և առաջին հերթին՝ Հայաստանի համար վտանգ լինելու հանգամանքը: Այս համապատկերում մի փաստ էլ շեշտենք. պատմությունը ցույց է տվել, որ Թուրքիան ամենևին էլ չի կաշկանդվում տարբեր կառույցներին իր անդամակցությամբ, եթե հարցը վերաբերում է իր օկուպացիոն, ագրեսիվ քաղաքական նպատակներին: Օրինակ, ՆԱՏՕ-ի անդամ լինելը չի կաշկանդել և հիմա էլ չի կաշկանդում իր ՆԱՏՕ-ական դաշնակից Հունաստանի հետ տարատեսակ խնդիրների, ընդ-

¹² Նույն տեղում:

հույս մինչև ռազմական բախման գնալ: Այնպես որ, մասնագիտական ավելի ճշգրիտ գնահատականն այն է, որ Թուրքիան չունի կարմիր գծեր և բառիս բուն իմաստով ապակառուցողական, ագրեսիվ, իր հարևանների հանդեպ օկուպացիոն քաղաքական մտածողություն ունեցող երկիր է. դա նրա քաղաքական հավատամքն է, որ չի փոխվել՝ սկսած 20-րդ դարի սկզբից, և հիմա էլ շարունակվում է առավել մեծ ինտենսիվությամբ:

Ակնհայտ է, որ Լիպարիտյանի պնդումը, թե Հայաստանի դիրքորոշումը հիմնված է միայն «մեկ դրույթի» վրա՝ «այն, ինչ վատ է Թուրքիայի համար, մեզ համար լավ է», ճիշտ չէ: Սակայն պետք է փաստել և հետևյալ իրողությունը. գաղտնիք չէ, որ Թուրքիան տասնամյակներ շարունակ տարբեր ոլորտներում Հայաստանի հանդեպ վարել և վարում է թշնամական քաղաքականություն: Այս պարագայում արդյո՞ք օրինաչափ չէ, որ Հայաստանն էլ իր հնարավորությունների սահմաններում կամ դրանց առկայության դեպքում պետք է հակադարձի: Այսինքն՝ Լիպարիտյանի ձևակերպմամբ՝ «այն, ինչ լավ է Թուրքիայի համար» թեզի տակ թաքնված են նաև հստակ հակահայկական բնույթի քայլեր, որոնց դեմ պայքարը Հայաստանի համար բնական է:

Լիպարիտյանի հաջորդ թեզի կամ տեսության հիմքը նույնպես կատեգորիկ է, ինչ-որ առումով արխայիկ, ժամանակավրեպ և Հայաստանի Հանրապետության իրողությունների աղճատված ընկալումների հետևանք: Այսպես, Լիպարիտյանն առաջ է քաշում հետևյալ տեսական դրույթը՝ «*վախը՝ որպես ռազմավարութիւն*»¹³, և մանրամասնում, որ դա Թուրքիայից և թուրքից հայերի ու Հայաստանի տածած վախն է, որը ձևակերպում է փոքր-ինչ պրիմիտիվ. «*Թուրքիան ու թուրքը մեզ ջարդեցին եւ պատրաստ են առաջին առիթով ալ մեզ նորէն ջարդելու*»¹⁴: Մինչև այս հարցի շուրջ մեր դիտարկմանն անդրադառնալը՝ արձանագրենք Լիպա-

¹³ Նույն տեղում, էջ 20:

¹⁴ Նույն տեղում:

րիտյանի ևս մեկ ինքնահերքող փաստարկ: Թուրքերի կողմից ցեղասպանություն իրականացնելու հավանականությունը քննադատորեն ներկայացնող Լիպարիտյանը հենց նույն էջում նշում է, որ Թուրքիան հայերի հանդեպ ցեղասպանություն է իրականացրել և ավելացնում է. «*Թէ ներկայիս եւ ապագային Թուրքիան կարող է կրկին ոճիր գործել մեր դէմ, այդ ալ թերեւս կարելիութիւն մըն է (ընդգծումը մերն է – Ռ.Մ.)*»¹⁵: Սակայն սա փաստելուց հետո կարդում ենք Լիպարիտյանի մտորումները «հայկական վախի» մասին, և այն, որ մենք՝ հայերս, վախը դարձրել ենք «մեր քաղաքական մտածելակերպի հիմք», դա ընդունում ենք որպես ռազմավարություն և «անքննելի գաղափար», դա որդեգրում որպես «*աշխարհի մեր ընկալման եւ այդ աշխարհի հետ մեր փոխյարաբերութեան ուղեցոյց*»¹⁶: Փաստացի Լիպարիտյանը հենց ինքը չի բացառում Թուրքիայի կողմից կրկին ցեղասպանություն իրականացնելու «կարելիությունը», այսինքն՝ չի հերքում, որ թուրքական պետությանը խորթ չէ ցեղասպան մտածողությունը, որովհետև եթե որևէ պետություն ունի ցեղասպանական ոճիր գործելու հակվածություն, ապա այդ պետությունը ցեղասպան պետություն է: Եվ եթե դա այդպես է, ապա մեր պետությունը և հասարակությունը չեն կարող անտեսել այդ ակնհայտ վտանգը և ցույց տալ, թե որևէ սպառնալիք չկա, ինչպես կոչ է անում Լիպարիտյանը և ինչպես նրան ձայնակցում են ոմանք: Հետևաբար, դա ոչ թե վախի ռազմավարություն է, այլ պարզ, պրագմատիկ սպառնալիքի գիտակցում ցեղասպան մտածողություն ունեցող պետությունից: Շատ տարօրինակ է լիպարիտյանական բանաձևը՝ թշնամի և սպառնալիք չհամարել այն պետությունը և հասարակությունը, որը քեզ այդպիսին է համարում և գործուն քայլեր է անում:

Շարունակելով իր թեզի «հիմնավորումները»՝ Լիպարիտյանը նշում է. «*Այդ վախին պատճառով կամաւոր կորդեզրենք երրորդ ուժի կայսերական քաղաքականութեան մեզի հրամցուցած դերը՝*

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 21:

որպէս գաղութ: Եւ այդ վախին ի պատասխան մեր զիջումները կը ներկայացնենք որպէս իրապաշտ եւ տրամաբանական ռազմավարութիւն»¹⁷: Պարզ է, որ ԱՄՆ քաղաքացի Լիպարիտյանը չի կարողանում թաքցնել իր ակնհայտ միտումը և որպէս երրորդ ուժ ներկայացնում է Ռուսաստանն ու նրա հետ ունեցած մեր դաշնակցային հարաբերությունները որպէս գաղութային: Հատկապէս մեր օրերում ակնհայտ է դառնում աշխարհում տարածված արևմտյան «ժողովրդավարության», դաշնակցային հարաբերությունների իրականում կեղծ և երեսպաշտ բնույթը. անգամ սոցցանցերում որոշակի դեպքերում, օրինակ, ուկրաինացիներին և այլոց կարելի է մահվան կոչեր անել ռուսների հանդեպ «ժողովրդավարական» մեթոդներով, իսկ Մոնթե Մելքոնյանի լուսանկարի տեղադրումն արգելվում է: Ըստ Լիպարիտյանի, ստացվում է, որ ԱՄՆ դաշնակից փոքր երկրներն իրական ազատ և իրատես երկրներ են, իսկ Ռուսաստանի դաշնակիցները՝ գաղութ: Օբյեկտիվությունից հեռու այս դիտարկումները տարակուսելի են նաև այն տեսանկյունից, որ Լիպարիտյանը եղել է իշխանության մեջ հենց այն տարիներին, երբ ձևավորվել ու ամրապնդվել են հայ-ռուսական հարաբերությունները, և հարց է ծագում, թե իր այս մոտեցումներն ինչու չի արտահայտել այն ժամանակ: Կարելի է պատկերացնել, թե ինչ հոգեբանական տանջանքների է ենթարկվել պետական պաշտոնյա Լիպարիտյանը՝ աշխատելով այդ պայմաններում: Իսկ եթե ավելի լուրջ, ապա Հայաստանի անվտանգության մակարդակը բարձրացնող արժանապատիվ մեխանիզմները և դրանք գտնելու բանաձևերը մշտապես կարևոր են Հայաստանի համար: Ռեալ այլընտրանքը ցույց չտալով՝ հայ-ռուսական հարաբերությունները «հերոսաբար» քննադատելն ուղղակի արկածախնդրություն է, որի դառը պտուղներն արդեն իսկ տեսնում ենք:

Շարունակելով իր վերլուծությունները՝ Լիպարիտյանը մտնում է հումանիզմի ասպարեզ. հումանիզմ թուրքերի հանդեպ: Լիպա-

¹⁷ Սույն տեղում, էջ 22:

րիտյանը բերում է մի բանաձև, որն իբրև թե թուրքի հանդեպ մեր վախի զգացողությունը վերածել է ատելության, այն էլ այնպիսի աստիճանի, «որ կրնայ մեզ դուրս հանել մեր իսկ մարդկայնությունեն»¹⁸: Հայերին, Հայաստանը և ամեն հայկականն ատող թուրքական պետության և հասարակության հանդեպ հումանիզմի կոչերը չընկալելով հանդերձ՝ պետք է ուղղակի հարցնել, թե քեզ ատող պետության հանդեպ ոչ թե ատելության, այլ առնվազն պատմական տրավմատիկ հիշողության, զգուշավորության պահպանման դեմ այսպես կատաղի արտահայտվելն ի՞նչ օգուտ կարող է տալ մեզ: Լիպարիտյանը, չհերքելով թուրքերի և մասնավորապես երիտթուրքերի՝ հայերի հանդեպ ունեցած կույր ատելությունը, չգիտես ինչու քննադատում է հայ մտավորականներին. «Հազուազուրկ չեն եղած դէպքեր, երբ նոյնիսկ մտաւորականներ ու քաղաքական գործիչներ իրենց կենացները սկսած ու աւարտած են «մահ թուրքին» նշանաբանով՝ կարծէք հաւարալով, որ այդ արդէն մեր բոլոր հարցերու լուծումն է: Եւ այդ նշանաբանը կրկնած ու վանկարկած են առանց նոյնիսկ պահ մը մտածելու, որ այդ նոյն նշանաբանն էր, որ Իթթի-հասրի դեկավարներուն ու իրենց գործակիցներուն համար դարձաւ բոլոր հարցերու լուծման իրենց իսկ ճանապարհը, միայն թէ «մահ թուրքին»ի փոխարէն «մահ հայուն»ով: Այն լուծումը, որ դարձաւ մեր վախի ծննդեան աղբիւրը»¹⁹:

Լիպարիտյանի հիմնական խնդիրը, մեր կարծիքով, այն է, որ նա կամ չի տեսնում, կամ չի ուզում տեսնել թուրքական իրականության մեջ հայկական խնդիրը և այն, որ հայերի հանդեպ ատելությունը ոչ թե անցյալի, սուլթանների, ենիչերիների, երիտթուրքերի խնդիր էր, այլ վաղուց արդեն ձեռք է բերել ինստիտուցիոնալ, պետական գաղափարախոսության կարգավիճակ: Դրանով են լի Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, պետական հռետորաբանությունը, կրթական համակարգը, գրականությունը, բանահյուսությունը, ասացվածքները, դարձվածքները, հասարակության

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 22-23:

լայն խավերի մտածողությունը, և ամենակարևորը, որ չի տեսնում Լիպարիտյանը, այն է, որ դրանք այսօր էլ լայն թափով ծավալվում են: Որևէ մեկը կարող է էական տարբերություն նկատել սույլթան Աբդուլ Համիդ 2-րդի, Աթաթյուրքի, Էրդողլանի հռետորաբանության մեջ հայերի վերաբերյալ. վստահորեն ասում եմ, որ դրանցում որևէ գաղափարական, մտածողության տարբերություն չկա: Արդ, ինչ է փնտրում Լիպարիտյանը և ինչ է առաջարկում. «Այս չի նշանակեր, որ մեր վախը արդարացի հիմքեր չունի: Ինչպէս վերելք նշեցի, Թուրքիան վախճալու պատճառներ տրուած է մեզի: Խօսքը չի վերաբերիր նաեւ նման հիմքերը մոռացութեան փայլուն: Խօսքը կը վերաբերի հետեւեալին. ինչպէս պէտք է վարուինք վախը պատճառող պատմական ու քաղաքական գործօնին: Պատասխանը պարզ է. պէտք է վախէն անդին անցնելով եւ մեր սպազայի կերպման մէջ գործօն դառնալով զարգացնենք պեղական մտածողութիւն»²⁰: Շատ լավ միտք է, բայց մի հարց է մնում. իսկ ինչ անել, երբ, դիցուք, Թուրքիան և Ադրբեջանն իրենք չեն ուզում փոխել ո՛չ իրենց գաղափարախոսությունը, ո՛չ մոտեցումներն ու ատելությունը հայության և Հայաստանի հանդեպ: Այսինքն՝ Լիպարիտյանի ձևակերպմամբ, Թուրքիայից բխող «վախճալու պատճառները» շարունակում են առկա մնալ, և, հետևաբար, նրա ամբողջ թեզը վերածվում է լավ ցանկությունների, իրականության հետ կապ չունեցող փաստարկների վրա հիմնված, ուստի և սին վերլուծության: Լավ կլիներ, եթե Լիպարիտյանն իր փորձի վրա հենված ներկայացնել վերլուծություն կամ թեզ, թե ինչպես և ինչ ռազմավարությամբ կարող է Հայաստանը դիմագրավել թուրք-ադրբեջանական սպառնալիքին, ատելությանը և զարգանալ:

²⁰ Նույն տեղում, էջ 24:

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Լիպարիտյանի աշխատության մի որոշակի հատված նվիրված է Հայոց ցեղասպանության խնդրին, սակայն այստեղ ևս հիասթափեցնող թեզերի և մտքերի պակաս չկա կարծես: Ուշագրավ է, որ Լիպարիտյանի գրքում հանդիպում ենք թուրքական այն թեզի զուգահեռին, թե Թուրքիային Հայոց ցեղասպանության իրագործման մեջ մեղադրած պետություններից որոշները հենց իրենք ցեղասպան են, օրինակ՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Ռուսաստանը և այլն: Ինչ է ասում Լիպարիտյանը, օրինակ, մշակութային եղեռնի մասին. «Թերեւս կարժէ յիշել նաեւ՝ Թուրքիան չէ միայն, որ սրբապղծող մշակութային քաղաքականութիւն կը վարէ... Այլ երկիրներու վայրագութեան ու Թուրքիոյ պարագային ամենէն կարեւոր փարբերութիւնը այն է, որ այս վերջինի պարագային զոհը մենք ենք»²¹: Այն, որ ցեղասպանություններ, որպես մարդկության պատմության ամենաճանր հանցագործություններ, տեղի են ունեցել տարբեր ժամանակներում և տարբեր երկրներում՝ փաստ է: Սակայն անհասկանալի է Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կազմակերպված ցեղասպանությունն այդ համապատկերում ներկայացնելու իմաստը և կարծես փորձ անելու տպավորություն ստեղծել, թե դա բացառիկ է լոկ այնքանով, որ զոհերը հայերն էին, որոնք նաև զրկվեցին բնօրրանի մի մեծ հատվածից: Բացի այդ, ինչպես նշվեց վերևում, այս ձևակերպումն անմիջապես հիշեցնում է Թուրքիայի պաշտոնական հակադարձումները Հայոց ցեղասպանության փաստը տարբեր երկրների կողմից ճանաչելու պարագայում, երբ անմիջապես հիշեցնում են այլ ցեղասպանությունների մասին՝ դրանով Հայոց ցեղասպանությունը ոչ միայն հերքելով, այլև անգամ ընդունողների համար այն ներկայացնելով որպես մեկը «սովորական ցեղասպանություններից»:

²¹ Նույն տեղում, էջ 29:

Հայոց ցեղասպանության փաստի ժխտման համապատկերում թուրքական հայտնի թեզերից կամ հոետորաբանության տարրերից է այն պնդումը կամ շահարկումը, թե հայկական կողմը մտավախություններ ունի և այդ պատճառով իր ոչ բոլոր արխիվներն է բացել: Թուրքական պաշտոնական հոետորաբանության ծեծված թեզերից է նաև այն, թե իբրև իրենք բացել են իրենց բոլոր արխիվները և կոչ են անում Հայաստանի տարբեր իշխանություններին համաձայնել, որպեսզի ուսումնասիրողները հետազոտեն և՛ թուրքական, և՛ հայկական արխիվները և պարզեն, թե արդյոք տեղի է ունեցել ցեղասպանություն: Ինչ է ասում Լիպարիտյանը. «...պէտք է պնդենք, որ արխիվներ ունեցող հայկական հաստատություններն ու կազմակերպությունները մարտչելի դարձնեն զանոնք՝ բոլոր օրինաւոր հետազոտողներու: Երբ որոշ հայկական արխիվներ տակաւին անմարտչելի կը մնան շատ մը հետազոտողներու, Թուրքիայէն բոլոր արխիվները բանալու պահանջը կըլլայ երեսպաշտութիւն»²²: Սա այն դեպքերից է, երբ մեկնաբանության կարիք էլ չկա, թուրքական թեզի բառացի թարգմանությունը հայերեն ահա այսպիսի ձևակերպում ունի, երբեմն անգամ մի փոքր մեղմ, օրինակ՝ հայերին երեսպաշտության մեջ ոչ բոլոր թուրք անդրադարձողներն են մեղադրում:

Մեկ այլ թուրքական թեզի դրսևորումների նույնպես հանդիպում ենք գրքում, որը վերաբերում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին, որի անկախությունը Լիպարիտյանը համարում է քաղաքականապես ոչ ապահով և ավելացնում. «Հաստատում Ցեղասպանության ուսումնասիրությունները կապված են Հայաստանի ազգային անվտանգության կասկածելի սահմանումների հետ»²³: Անգամ ոչ մասնագետ ընթերցողի կողմից փաստերի մակերեսային համադրումը ցույց կտա, թե այս տեսակետն ինչքան հար և նման է թուրքական պաշտոնական թեզերին՝ կապ-

²² Նույն տեղում, էջ 86:

²³ Նույն տեղում, էջ 225:

ված Հայաստանում և ընդհանրապես հայկական միջավայրում Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրության և հայկական գիտության իբրև թե քաղաքականացված լինելու հետ: Բացի այդ, զարմանալի է, որ Լիպարիտյանը մոռանում է նշել, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության փաստի ժխտման հարցով զբաղվում են պետական տարբեր կառույցներ, և այդ ամբողջ գործընթացի ուղղորդումն անում է պետական բարձրագույն իշխանությունը:

Լիպարիտյանի կատեգորիկ և անգամ կտրուկ ու ծայրահեղ բնութագրումները հատկապես ցայտուն են դրսևորվում հայության մեջ ցեղասպանության ընկալման և թուրքին մեղադրելու խնդիրը քննարկելիս: Նախ՝ Լիպարիտյանը ֆիքսում է իր համար, թերևս, անառարկելի հետևյալ «ճշմարտությունները». «Հայկական կողմի քննարկումը եղած է կոշտ եւ յախուռն: Ան թէ՛ անցեալի եւ թէ՛ այսօրուայ բոլոր թուրքերուն կը մեղադրէր քրէական գործողութեան մասնակից ըլլալու մէջ»²⁴: Այս մերկապարանոց և ծայրահեղության գազաթնակետին հասած մեկնաբանությունը միգուցե կարելի էր անտեսել, բայց հենց դրա վրա էլ Լիպարիտյանը կառուցելու էր իր հաջորդ թեզերը ուստի, հարկ է շատ համառոտ անդրադառնալ: Նախ՝ «բոլոր թուրքերուն» մեղադրելու միտում թե՛ հայկական գիտության, թե՛ քաղաքական և հասարակական շրջանակների մեջ երբեք չի եղել: Այլ հարց է, որ թուրքական հասարակության մեծ մասը կամ աջակցել, կամ մասնակցել է ցեղասպանությանը, կամ էլ ուղղակի լռել է այդ հանցանքի մասին: Եթե անցյալի թուրքերին մեղադրելը ցեղասպանությանը մասնակցելու մեջ հետևյալ ձևակերպմամբ՝ «թուրքական հասարակության մեծ մասն ուղղակի և անուղղակի մասնակցություն է ունեցել Հայոց ցեղասպանության մեջ», կարելի է համարել տեսականորեն կիրառելի, ապա «այսօրուայ բոլոր թուրքերուն» այդ ինչպե՞ս ենք մեղադրում քրեական հանցանքի մեջ: Սա լիովին այլ երևույթ է. մենք ցեղասպանությունը ժխտողներին մեղադրում

²⁴ Նույն տեղում, էջ 161:

Ենք ժխտման համար, իրենց պետության պաշտոնական քարոզչության զոհերը լինելու և դրանից դուրս գալու ցանկություն չունենալու մեջ: Ցեղասպանության մասշտաբի հանցանքի ժխտումը նույնպես հանցանք է, և, ի վերջո, Լիպարիտյանին պետք է ծանոթ լինի “denialist” ձևակերպումը: Բացի այդ, հայկական հասարակության մեջ դրական առումով բավական ճանաչված են և երբեմն անգամ ուռճացված դրական ընկալում ունեն այն թուրքերը՝ գիտնականներ, մտավորականներ, որոնք այս կամ այն կերպ ընդունում են Հայոց ցեղասպանության փաստը: Այլ բան է, որ նրանց գործունեությանը նեղ մասնագետներն իրավացիորեն մեծ վերապահումով են մոտենում, և դեպքերն ու հատկապես 2020թ. Արցախյան պատերազմն ապացուցեցին, որ հիացական գնահատականները, մեղմ ասած, տեղին չէին, քանի որ այդ թուրք մտավորականներից գրեթե ոչ մեկը որևէ էական քայլ կամ անգամ հայտարարություն չարեց թուրք-ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ: Դե, իսկ Հայաստանում նրանց գովերգմամբ զբաղվող և այսօր էլ Լիպարիտյանի տեսություններով հիացողներն իրենց նեղություն էլ չտվեցին խոստովանել, որ սխալվել են իրենց հիացական գնահատականներում և դրանով նաև մոլորեցրել հայ հասարակության մի հատվածին:

Սակայն «բոլոր թուրքերին» մեղադրելու գիտական և անգամ տրամաբանական հիմնավորումներից հեռու սահմանումից զատ, պակաս անլուրջ և խոցելի չէ Լիպարիտյանի այն մեկնաբանությունը, թե ինչու է Թուրքիայի քաղաքացիների մեծ մասը ժխտում Հայոց ցեղասպանությունը: Ըստ Լիպարիտյանի, «...միակ ձեռք, որով թուրք քաղաքացին կարող էր դիմակայել ռճիրի համար մեղադրանքին, որու մասին գրեթե ոչինչ կամ բոլորովին ոչինչ գիտէր, նոյն այդ ռճիրի ժխտումն էր»²⁵: Նախ՝ այս պնդումն էլ է կատեգորիկ և սխալ, թե «թուրք քաղաքացին գրեթե ոչինչ չգիտի»

²⁵ Նույն տեղում:

Հայոց ցեղասպանության մասին: Չնայած թուրքական ժխտման պաշտոնական քաղաքականությանը, որն արտացոլվել է այդ երկրի պետական քարոզչության, կրթական համակարգի, դպրոցական և բուհական դասագրքերի մեջ, այնուամենայնիվ, կարող ենք փաստել, որ Հայոց ցեղասպանությունը թուրքական պետության և հասարակության մի որոշակի հատվածի ընդհանուր գաղտնիքն է և ընդհանուր մեղքը: Ուստի, խոսել, որ Թուրքիայի քաղաքացիները չգիտեին և մանավանդ հիմա՝ համացանցի դարում, չգիտեն Հայոց ցեղասպանության մասին՝ առնվազն լուրջ չէ: Բայց ավելի պարզ հակափաստարկներ էլ բերենք. Թուրքիայի արևելյան շրջաններում՝ պատմական Հայաստանում ապրող Թուրքիայի քաղաքացիները չեն տեսնում, որ հայկական տներում են ապրում, չեն տեսնում իրենց հարևանությամբ հայկական եկեղեցիները և դրանց ավերակները, ավագ սերունդները չեն հիշում այն, ինչին ականատես և մասնակից են եղել, նրանց սերունդերը չեն հիշում իրենց ավագների պատմությունները և երբեմն ինքնագովեստի խոսքերը հայերին կոտորելու մասին և այլն: Ուստի, Լիպարիտյանի ձևակերպումը, թե Թուրքիայի քաղաքացուն մնացել էր այդ մեղադրանքին դիմակայելու միակ ձևը՝ ժխտել Հայոց ցեղասպանության փաստը, խոցելի է և անհիմն: Ավելին՝ Լիպարիտյանը կարծես անթաքույց փորձ է անում արդարացնել Թուրքիայի քաղաքացուն, որը ոչ միայն այսօր էլ շարունակում է անարգել և պղծել հայկական մշակութային ու պատմական հետքերը պատմական Հայաստանում, այլև ժխտում է իր նախնիների հանցանքը: Ուղղակի պետք է ևս մեկ անգամ կողք կողքի դնել և կարդալ հայկական ու թուրքական հասարակություններին տրված լիպարիտյանական բնութագրումները. *«հայկական կողմի քննարկումը եղած է կոշտ եւ յախուռն»* – *«միակ ձևը, որով թուրք քաղաքացին կարող էր դիմակայել... այդ ոճիրի ժխտումն էր»*: Այսինքն՝ հայերս «կոշտ ու հախուռն ենք քննար-

կում», իսկ «խեղճ թուրքը», այլ ելք չունենալու պատճառով, «ստիպված ժխտում է» Հայոց ցեղասպանության փաստը:

Շարունակելով թեման՝ Թուրքիայի քաղաքացու կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումը Լիպարիտյանն իրավացիորեն համարում է «*թուրքի ինքնութեան եւ թուրք ազգի նկատմամբ դավաճանութեան*» համազոր քայլ, սակայն հայերի պարագայում մեկնաբանությունը կրկին տանում է հայության աննպատակ, այսրոպեական խնդիրների ծիրում ընկալվելու տիրոյթ. «*Հայերու քանավէճը կարծես անելի գոհացում կը գտնէր հակաթրքական կեցուածքին, քան թէ ժխտման արմատները հասկնալու որեւէ լուրջ փորձին մէջ*»²⁶: Այստեղ նույնպես պետք է չհամաձայնենք հեղինակի ձևակերպումներին, քանի որ ժխտման արմատները հասկանալուն միտված բազմաթիվ ուշագրավ ուսումնասիրություններ կան հայկական գիտական շրջանակներում, և այդ ամենը որակել «որեւէ լուրջ փորձի» բացակայություն՝ ճիշտ չէ: Սակայն Ժ. Լիպարիտյանը, խորանալով հայերիս քննադատելու իր տեսությունների մեջ, գրում է. «*Տեղասպանութեան ժխտման քաղաքականութիւնը պարզապէս դիպրոնեցաւ իբրեւ Թուրքիոյ ու թուրքերու չար բնոյթի դրսևորում*»²⁷: Սա ոչ միայն տողերի հեղինակի ոչ կոմպետենտության դրսևորումներից է, այլև հայ ժողովրդի հավաքական ընկալման և պայքարի շարժիչ ուժի պրիմիտիվացման ակնհայտ փորձ: Չժխտելով, որ թուրքական ժխտողականության դեմ պայքարում հայության գործելաճոճում եղել են և կան անարդյունավետ տարրեր, այժմ ծառացել է պայքարի արդյունավետությունը բարձրացնելու, նոր գործիքակազմ և մեթոդներ որդեգրելու սուր անհրաժեշտություն, սակայն, այնուամենայնիվ, լիպարիտյանական տոտալ նիհիլիստական և հայության համազգային մտածողության նսեմացման փորձերը վիրավորական են և դատապարտելի:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

Մեղմ ասած՝ անհասկանալի կամ տարակուսելի է, երբ Ժ. Լիպարիտյանը փորձում է հավասարության նշան դնել թուրքական և հայկական կողմերի միջև պատմական դեպքերի, ռազմական և քաղաքական գործիչների հանդեպ պետական կամ հանրային վերաբերմունքի միջև: Ավելին, ասես թուրքական գործելակերպին ըմբռնումով է մոտենում, օրինակ՝ *«Հանրապետության հաստատումէն ի վեր հայերուն եւ Թուրքիոյ մէջ բնակող միւս ժողովուրդներուն առնչուող իրադարձութիւններու նկատմամբ Թուրքիոյ պաշտօնական վերաբերմունքը անելի առողջ չէ. հոն ալ կը բացառուի որեւէ արժանապատիւ ու բանական երկխօսութիւն»*²⁸: Հավասարության նշան դնելու փորձն ակնհայտ է. «վերաբերմունքը անելի առողջ չէ» արտահայտությունը ոչ միայն համեմատություն է, այլև հայկական վերաբերմունքի գնահատական առ այն, որ դա էլ առողջ չէ: Իսկ Լիպարիտյանի «հոն ալ կը բացառուի որեւէ արժանապատիւ ու բանական երկխօսութիւն» արտահայտությունը հստակ նշանակում է, որ հայկական իրականության մեջ էլ է բացառվում արժանապատիվ և բանական երկխոսությունը: Սա իր մեջ “Victim blaming”-ի ակնհայտ տարրեր է պարունակում, որ ոչ միայն տեղին չէ, այլև օբյեկտիվ պատկերի խեղաթյուրմանը նպաստող քայլ է:

Չենք կարող անտեսել նաև Լիպարիտյանի կողմից որոշ սխալ տերմինների և ձևակերպումների կիրառման աղաղակող փաստերը. օրինակ՝ նա կիրառում է *«Արեւելեան Թուրքիոյ նախկին հայաբնակ նահանգներ»*²⁹ արտահայտությունը: Ընդ որում, պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ Լիպարիտյանը կիրառում է ոչ թե նախկին *հայկական*, այլ *հայաբնակ* նահանգներ եզրույթը. այսինքն՝ Կարսում, Մուշում, Էրզրումում հայերը զուտ բնակվել են ինչ-որ պահից սկսած, այլ ոչ թե այդ տարածք-

²⁸ Նույն տեղում, էջ 161-162:

²⁹ Նույն տեղում, էջ 163:

ները եղել են հայերի բնօրրան, որտեղ նաև ձևավորվել են հայկական պետականություններ, քաղաքակրթություն, մշակույթ, ընդունվել է քրիստոնեություն, ստեղծվել այբուբեն, կառուցվել են տաճարներ, կրթության, գրչության կենտրոններ և այլն:

Իսկ 1970-1980-ականներին հայ վրիժառուական խմբերի կողմից Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչությունների և դիվանագետների հանդեպ իրականացված գործողությունները Լիպարիտյանը որակում է «բռնարարք», «*ահաբեկչություն*»³⁰, «...թուրք դիվանագետներու եւ թրքական հաստատություններու դէմ հայկական գաղտնի խումբերու իրականացուցած ահաբեկչական գործողությունների շարքը...»³¹: Այստեղ կարելի է մի հոռետորական հարց ուղղել հայկական և թուրքական կողմերի միջև հավասարության նշան դնելու մեծ ջատագով Ժ. Լիպարիտյանին. արդյո՞ք նա տեղյակ է, թե ինչպես են թուրք պաշտոնյաները, պատմաբանները, մամուլն անվանում, օրինակ, երիտթուրք պարագլուխ ցեղասպան Թալեաթին, Էնվերին, Ջեմալին և մյուսներին: Փաստենք, որ հիշյալ և այլ ոճրագործներ Թուրքիայում պետականորեն հերոսացված են, ունեն «ազգային նահատակի» կոչում, նրանց անունով կան դպրոցներ, փողոցներ, պուրակներ: Իսկ 2020թ. 44-օրյա պատերազմից հետո Բաքվի զորահանդեսի ժամանակ Թուրքիայի նախագահն իր ելույթում գովաբանում էր Էնվեր փաշային և Արցախի մի մասի օկուպացիան համարում նրա հոգու փառավորում: Ավելի ցածր մակարդակի մարդասպաններին՝ Հոռմի պապի դեմ մահափորձ իրականացրած Մեհմեթ Ալի Աղջային, Հրանտ Դինքին սպանած Օզյուն Սամասթին նույնպես Թուրքիայում հերոսացնում են, նրանց մասին երգեր երգում, պատմաբաններն ու մամուլն էլ կիրառում հերոսացնող, գովաբանող բնորոշումներ:

³⁰ Նույն տեղում, էջ 40:

³¹ Նույն տեղում, էջ 177:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՆՀԱՅՏ ՊԱԿԱՍ

Որ նախկին պաշտոնյա Ժ. Լիպարիտյանը կարող է ունենալ Թուրքիայի մասին երբեմն իմացության պակաս, երբեմն սխալ տեղեկություններ և պատկերացումներ՝ միգրացե կարելի է դրանց ընթռնումով մոտենալ, բայց, երբ որպես գիտնական կամ Թուրքիայի հետ կապված հարցերում խորագիտակ մասնագետ դիրքավորված Լիպարիտյանն իր գրքում ի ցույց է դնում Թուրքիայի, այդ երկրի պատմության, քաղաքական կուսակցությունների գաղափարախոսությունների և անգամ երկրի մայրաքաղաքի մասին իմացության լրջագույն պակաս, ապա դա, մեղմ ասած, ընդունելի չէ:

Սկսենք ամենապարզունակ սխալներից, որոնք շատ կուզենայինք, որ տեխնիկական կամ տպագրական լինեին, սակայն կարծես թե այդպես չեն: Այնուամենայնիվ, խորհուրդ կտանք հեղինակին գրքի հետագա հրատարակությունների պարագայում դրանք ուղղել: Օրինակ, խոսելով Հրանտ Դինքի և նրա դերակատարման մասին՝ Լիպարիտյանը գրում է. «...ծագումով Արևմտահայաստանի ամենէն մօտ քաղաքէն՝ Պոլիսէն...»³²: Նախ Պոլիսը՝ ներկայիս Ստամբուլը և նախկին Կոստանդնուպոլիսը, երբևէ պատմական Հայաստանի, առավել ևս՝ Արևմտյան Հայաստանի քաղաք չի եղել: Կարելի է անգամ կիսահումորով Լիպարիտյանի այս տարրական սխալն անվանել «հայդատականության ամենածայրահեղ դրսևորում», երբ հեղինակը հավակնում է Հայկական բարձրավանդակից դուրս գտնվող տարածքների: Եվ երկրորդ՝ Հրանտ Դինքը ծագումով ոչ թե Պոլսից է, այլ Մալաթիայից:

Եվս մեկ աղաղակող սխալ. խոսելով Թուրքիայում բնակվող և աշխատող ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների մասին՝ Լիպարիտյանը նշում է. «Թուրքիոյ, գլխաւորաբար մայրաքաղաքին (ընդգծումը մերն է – Ռ. Մ.) մէջ, աշխատանք գտած տասնեակ հազարաւոր Հայաստանի քաղաքացիներու առկայութիւնը»³³: Հա-

³² Նույն տեղում, էջ 68:

³³ Նույն տեղում, էջ 69:

յաստանցի աշխատանքային միգրանտները մեծ մասամբ բնակվում և աշխատում են Ստամբուլում, իսկ Ստամբուլը Թուրքիայի մայրաքաղաքը չէ, Թուրքիայի մայրաքաղաքը Անկարան է, որտեղ հայերի թիվը շատ քիչ է, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացի աշխատանքային միգրանտներ այնտեղ կամ չկան, կամ շատ քիչ են և հաստատ «տասնեակ հազարներ» ուղղակի չեն կարող լինել: Բացի այդ, ըստ Լիպարիտյանի՝ Թուրքիայում գտնվող աշխատանքային միգրանտ հայերի թեման լրջորեն ուսումնասիրված չէ, սակայն այս մտքի հետ մասամբ ենք համաձայն, քանի որ այդ թեմայի, ընդ որում՝ տարբեր ասպեկտների մասին կան մասնագիտական, լրագրողական, անգամ ազգագրական ուսումնասիրություններ, որոնց երևի թե պարոն Լիպարիտյանը ծանոթ չէ, սակայն դա նրան իրավունք չի տալիս ևս մեկ կատեգորիկ գնահատական տալ:

Վերոնշյալ «անմեղ» սխալների կամ տարրական փաստերի չիմացության կողքին Ժ. Լիպարիտյանի գրքում կան խորքային սխալներ և կարծես մտացածին, «լավ Թուրքիա» տեսնելու և նկարագրելու անզուսպ ցանկություն, որը ստեղծում է ոչ օբյեկտիվ պատկեր, իսկ գրքի ոչ մասնագետ ընթերցողները կարող են լիովին սխալ ընկալում կազմել Թուրքիայի մասին, ինչը, հաստատ, Հայաստանի շահերից չի բխում: Մասնավորապես՝ պարոն Լիպարիտյանն այսպիսի գնահատականներ է տալիս 2002 թվականից Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությանը և վերջինիս ղեկավարի՝ Թուրքիայի նախագահ Էրդողանին. «Իշխանություն գալով՝ Արդարություն եւ Չարգացում Կուսակցությունը (AK Parti), որ իր գաղափարախօսությամբ եւ օրինակարգությամբ այնքան ալ պարտական չէ ազգայնական անցեալին, նոյնպէս նոր հնարատրություններ բացաւ»³⁴: Նախ՝ պարոն Լիպարիտյանը սկզբունքորեն և շատ կոնկրետ սխալվում է ԱԶԿ-ն ազգայնականությունից կամ ազգայնական անցյալից հեռու նկարագրելով. դա ուղղակի ճիշտ չէ, և Էրդողանն ու իր թիմը բացա-

³⁴ Նույն տեղում, էջ 180:

հայտ ազգայնական ոճի և հոետորաբանության, կարգախոսների, անգամ ժեստիկուլյացիայի կրող են, ինչը տեսանելի է նույնիսկ ոչ մասնագիտական շրջանակների համար: Արդյո՞ք պարոն Լիպարիտյանը չի տեսել Թուրքիայի նախագահ Էրդողանի, նախկին վարչապետ Բինալի Յըլդըրմի, ներկայիս արտաքին գործերի նախարար Մկրտչ Չավուշօղլուի կողմից ազգայնամուլական «գորշ գայլերի» հատուկ ողջույնի ձևի կիրառումը հանրային միջոցառումների, նախընտրական քարոզարշավների ժամանակ և այլ դեպքերում: Բացի այդ, արդեն տևական ժամանակ է, ինչ Թուրքիայում իսլամն ու ազգայնականությունը միահյուսված են, դրա հիմքերը կարող ենք տեսնել դեռևս 1980-ականներից պետականորեն մշակված, այսպես կոչված, թյուրք-իսլամական սինթեզի տեսության մեջ: Այսօր ԱԶԿ-ն դաշինքի մեջ է ծայրահեղ ազգայնական, ահաբեկչական «Գորշ գայլերի» քաղաքական թևի՝ «Ազգայնական շարժում» կուսակցության հետ: Այսինքն՝ այսօրվա Թուրքիայի իշխող դաշինքը կազմված է իսլամամետ և ազգայնամուլական կուսակցություններից, որոնք իրենց գաղափարախոսություններով կարծես սերտաճել են, և ձևավորվել է «ազգայնական իսլամականություն» կամ «իսլամական ազգայնականություն»: Հետևաբար, Թուրքիայում իշխող ԱԶԿ-ն ոչ միայն ունի հստակ ազգայնական անցյալ, այլև ավելի ծայրահեղ ազգայնական դարձած ներկա և նման հունով ծավալվող ապագա, և Լիպարիտյանի պնդումները հակառակի մասին ուղղակի տարրական սխալ են և լավագույն դեպքում՝ չիմացության արդյունք, իսկ վատագույն դեպքում՝ իրականության խեղաթյուրում:

Այդ նույն համապատկերում Լիպարիտյանը կրկին սխալվում է թուրքական ժխտողականության հայտնի կիսաքողարկված բանաձևը՝ պատմությունը պատմաբաններին թողնելը կամ պատմաբանների հանձնաժողով ձևավորելը ներկայացնելով որպես դրական քայլ: Այսպես, «Պատմությունը պատմաբաններուն թողնելու մասին վարչապետ Էրդողանի առաջարկությունը, մեղմ ըսելով, պատմությունը այլ կերպ ընկալելու հնարաւորութեան խիզախ

ճանաչումն էր, քանի որ ան նոյնպէս փարբեր ապագայով Թուրքիա մը կը պատկերացնէր»³⁵: Լիպարիտյանի ասած՝ Էրդողանի կողմից պատմությունն այլ կերպ ընկալելու «խիզախ ճանաչումն» ուղղակի պատմության խեղաթյուրման և Հայոց ցեղասպանությունը ժխտելու նոր մեթոդն էր, որը հրապարակ նետվեց թուրքական քարոզչամեքենայի կողմից հատկապես Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցից առաջ, և սրա մասին դրական արտահայտվելու համար Լիպարիտյանի հիմքերը, մղող հանգամանքներն իրոք անհասկանալի են: Ի դեպ, պատմաբանների հանձնաժողով ձևավորելու հարցով նույն Էրդողանը 2005թ. նամակ հղեց Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին, և այդ նամակն ուղարկելու փաստի ուղղությամբ սկսեց ակտիվորեն աշխատել թուրքական քարոզչամեքենան՝ միջազգային մամուլում և հարթակներում ներկայացնելով, թե ձեռք են մեկնել Հայաստանին. այդ ամենը «պատահական» զուգահեռությամբ տեղի էր ունենում ապրիլի 24-ին ընդառաջ: Էրդողանին պատասխան նամակում Հայաստանի նախագահը փաստեց, որ պետությունների միջև հարաբերություններ հաստատելու պատասխանատվությունը ոչ թե պատմաբաններին է, այլ քաղաքական գործիչներին: Դրանից հետո պատմաբանների հանձնաժողով ձևավորելու հարցը դարձավ թուրքական քարոզչամեքենայի սիրած թեզերից մեկը, և ամեն պատեհ կամ անպատեհ առիթով այդ մասին հայտարարում էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաները: Այսինքն՝ սա ոչ միայն պատմության կեղծարարության վատ քողարկված փորձ էր, այլև ձգտում լուրջ իմիտացիա ստեղծելու, թե Թուրքիան «կառուցողական» քայլեր է անում: Իսկ Էրդողանի արդեն հետագա տարիների ելույթներից ավելի ակնհայտ է դառնում, որ այդ առաջարկն ուղղակի մարտավարական հնարք է եղել, և Թուրքիայի իրական տեսակետը շարունակում է մնալ տոտալ ու կարծր ժխտողականության ծիրում:

³⁵ Նույն տեղում, էջ 180-181:

Լիպարիտյանի աշխատանքներում կարծես փորձ է արվում առանձնացնել Թուրքիայի ներկայիս նախագահ Էրդողանին ընդհանուր թուրքական ժխտողականության ծիրից, սակայն դա տեսական, մեթոդական և փաստագրական լրջագույն սխալ է, քանի որ Էրդողանն ինչ-որ պահի ստիպված էր լինել «մեղմ» կամ այլափոխված ժխտողականության կրող, իսկ հետո կրկին վերադարձավ ավելի կոշտ շեշտադրումների և պահվածքի դաշտ, որն ավելի հոգեհարազատ է իր կերպարին: Սակայն Լիպարիտյանն այնպիսի կարծիքի է, որը կարելի է բնութագրել որպես անհիմն հիացականի և սխալի միաձուլում. «*Հայոց Յեղասպանության ճանաչման կամ ժխտման հարցի միջազգայնացումէն ի վեր, այս նիւթով զբաղուող Թուրքիոյ առաջնորդներէն Ռեչեպ Թայիպ Էրդողան առաջինն է, որ որպէս վարչապետ նոր մօտեցում մը կիրառեց: Նախկին վարչապետները պարզապէս ժխտեցին, որ որեւէ լուրջ բան պատահած էր եւ իրենց ներկայացուցիչներուն ալ պատրուիրեցին յարձակողականօրէն ժխտել Յեղասպանութիւնը ամէն երկրի մէջ, ինչպէս նաեւ ճնշում բանեցնել, որ այդ պետութիւնները 1915 թ.-ին սկսած դէպքերը որպէս ցեղասպանութիւն չճանչնան: Էրդողանի մօտեցումը սա էր. ճիշդ է, որ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին հայերը տեղահանութիւններու ենթարկուեցան, ու շարքերը մահացան, եւ անոր համար ան ցավակցութիւն յայտնեց Թուրքիոյ հայ քաղաքացիներուն այդ բոլորի պատճառած ցաւին համար: Եւ սակայն ան մերժեց ընդունիլ, որ օսմանեան քաղաքականութիւնը համազօր էր ցեղասպանութեան՝ առարկելով, որ իսլամներն ու թուրքերն ալ հսկայական վնասներ կրեցին այդ պատերազմի ընթացքին»³⁶: Որտեղ է սխալվում Լիպարիտյանը. Էրդողանը նոր մեթոդ կիրառեց ոչ թե Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու, այլ այն ժխտելու, որպես ցեղասպանություն չներկայացնելու առումով: Վստահ եմ, որ Լիպարիտյանը քաջատեղյակ է այդ տարիներին*

³⁶ Նույն տեղում, էջ 258:

հատկապես Ահմեթ Դավութօղլուի նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրված, այսպես կոչված, «արդար հիշողության», «երկուստեք զոհերի» թեզերի մասին, համաձայն որոնց՝ 1915-ին և հետագա տարիներին զոհվել, սպանվել կամ մահացել են ոչ միայն հայեր, այլև թուրքեր, քրդեր, ուստի, եթե ուզում ենք, որ հիշողությունն արդար լինի, ապա պետք է շեշտենք դա: Իսկ Ստամբուլի հայկական որոշ շրջանակներ, ծայնակցելով թուրքական իշխանություններին, սկսեցին շրջանառել պրիմիտիվ մի թեզ՝ «երկու եղբայր գժտվեցին 1915-ին, և տեղի ունեցան փոխադարձ կորուստներ», այսինքն՝ փորձ էր արվում Հայոց ցեղասպանության խնդիրը ներկայացնել որպես էթնիկ բախում հայերի և թուրքերի միջև, այլ ոչ թե պետության և դրա տարբեր կառույցների կողմից մշակված ու իրականացված գործողություն մի ամբողջ ազգի դեմ, որն էլ հենց կոչվում է ցեղասպանություն: Այստեղ ուղղակի փաստերի, երևույթի ակնհայտ խեղաթյուրում է, և հավասարության նշան է դրվում պետության մշակած սպանդի մեքենայի և որոշ տեղերում հայերի ինքնապաշտպանության դեպքերի միջև՝ դա ներկայացնելով որպես միջէթնիկ բախում: Խոսելով այդ տարիներին այլ ազգերի շրջանում եղած զոհերի մասին՝ պետք է փաստենք, որ ընթացող Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրությունը պատերազմող կողմ էր, և նրա բանակի շարքերում, իհարկե, պետք է զոհեր լինեին, պատերազմական գործողությունների թատերաբեմին մոտ բնակավայրերում նույնպես չէր կարելի բացառել զոհերը, սակայն դա լրիվ այլ խնդիր է, և այն համեմատել օսմանյան պետության կողմից մանրակրկիտ կազմակերպված ցեղասպանության հետ՝ ուղղակի անհնար է և անտրամաբանական: Դա նույնն է, որ գերմանացի որևէ պաշտոնյա խոսի Հոլոքոստի մասին և հայտարարի, որ այդ տարիներին զոհվել են նաև նացիստական բանակի գերմանացի զինվորներ կամ խաղաղ բնակչություն:

Այս համեմատություններն ուղղակի աբսուրդային են, և մնում է միայն զարմանալ, որ իրատեսությունը որպես իր քաղաքական կրեդո հռչակած Լիպարիտյանը ինչպես կարող է չտեսնել այս ամենում վատ թաքցված ցեղասպանության ժխտումը:

Սակայն Լիպարիտյանը ոչ միայն չի տեսնում Էրդողանի ակնհայտ սխալ և ժխտման քաղաքականությունը, այլև շարունակելով իր վերլուծությունը՝ ուղղակի սկսում է գովերգել Թուրքիայի ղեկավարին և դրանով մոլորեցնել իր հետևորդներին, իր գրքի թեկուզ և անկողմնակալ ընթերցողներին, որոնք, փաստորեն, հայտնվում են ոչ թե թուրքական պատմագրության հարձակման թիրախում, այլ ճշմարտությունները խեղաթյուրվում են հայ մասնագետի կողմից, դրանք հրամցվում են հայերեն: Ավելին՝ Լիպարիտյանի տեսակետներն այս պահին իշխող կուսակցության անդամների, որոշ վերլուծաբանների, որոշակի կողմնորոշում ունեցող գիտավերլուծական շրջանակների կողմից ներկայացվում են որպես գերգիտական, գերիրատեսական վերլուծություն, որը կարծես երկար սպասված երկնային մանանա էր, որը սփռվեց հայկական գիտական, վերլուծական և քաղաքական դաշտում: Խորանալով իր սխալմունքի մեջ՝ Լիպարիտյանը նշում է. *«Էրդողան՝ շնորհիւ իր իսկ քաղաքական փիլիսոփայութեան, որ արմատաւորած է իսլամական պահպանողականութեան մէջ, հնարաւորութիւն ունեցաւ ճանչնալու եւ դատապարտելու հայերու հանդէպ իթթիհապականներու դաժան վերաբերմունքը, քանի որ վերջիններու քաղաքականութիւնը որեւէ կապ չունէր կրօնքի հետ, այլ կապուած էր ազգայնական սկզբունքներու, որոնք տիրապետող էին Օսմանեան Կայսրութեան վերջին տարիներուն եւ ներդրուած էին հանրապետական վարչակարգին մէջ՝ սկզբնական տարիներուն»*³⁷: Այն, որ Էրդողանի քաղաքական փիլիսոփայության հիմքում իսլամական պահպանողականությունն է կամ դա մեծ տեղ ունի՝ ճիշտ է, սա-

³⁷ Նույն տեղում, էջ 259:

կայն ասել, որ Էրդողանը դատապարտել է երիտթուրքերի՝ իթթիհատականների դաժան վերաբերմունքը հայերի հանդեպ և որ ազգայնականությունը հեռու է Էրդողանից՝ ուղղակի աղաղակող սխալ է: Ըստ Լիպարիտյանի՝ երիտթուրքերի ոճրագործությունները դատապարտել է այն Էրդողանը, որը 2020թ. պատերազմից հետո Բաքվում տեղի ունեցած զորահանդեսին գովերգում էր երիտթուրք պարագլուխ Էնվեր փաշային: Լիպարիտյանը, ենթադրում եմ, գիտի նաև Էրդողանի կտրուկ հայտարարությունները, թե իր նախնիները ցեղասպանություն չեն արել և չէին կարող անել³⁸:

Էրդողանին գովելով և ցեղասպանությունների հանդեպ իբրև թե նրա տարբերակված մոտեցումները ներկայացնելով՝ Լիպարիտյանը որպես ցայտուն օրինակ բերում է արդեն Թուրքիայի Հանրապետությունում 1937-1938թթ. Դերսիմում տեղի ունեցած ցեղասպանությունը, որին զոհ են գնացել զազաներ, ինչպես նաև կրոնափոխ եղած և կիսաուծացած հայեր, որոնց մի մասը Դերսիմում էր ապաստան գտել նաև 1915-ին: Լիպարիտյանն այսպես է ներկայացնում խնդիրը և անմիջապես էլ անում սխալ վերլուծություն. «Առանել նշանակալի էր, որ 2011 թ.-ին Էրդողան ներողութիւն խնդրեց 1938 թ.-ին ու 1939 թ.-ին Տերսիմ Թունճելիի մէջ քիւրդ քաղաքացիական ազգաբնակչութեան կոտորածներուն համար: Ներողութեան գաղափարն ու փաստը ինքնին շար աւելի կարելոր են, քան մանրամասները»³⁹: Կոպտագույն սխալ է այն, որ ըստ Լիպարիտյանի՝ ներողությունն ավելի կարևոր է, քան մանրամասները. ճիշտ հակառակը, այստեղ հենց մանրամասներն են կարևոր, իսկ իրն է մանրամասնը: 1938թ. Դերսիմի կոտորածը կամ ցեղասպանությունն իրականացրել է Աթաթուրքի գլխավորությամբ «Հանրապետական ժողովրդական կուսակցության» (ՀԺԿ) իշխա-

³⁸ Erdoğan çok net: “Benim ecdadim soykirim yapmaz”, <https://www.cnnturk.com/dunya/erdogan-cok-net-benim-ecdadim-soykirim-yapmaz>

³⁹ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, էջ 276:

նություները, որն Էրդողանի գաղափարական և քաղաքական թշնամին է, ներկայիս Թուրքիայի հիմնական ընդդիմադիր ուժը: Էրդողանը, հրապարակ բերելով Դերսիմի խնդիրը, ՀԺԿ-ին ուղղակի, իսկ Աթաթյուրքին՝ անուղղակի ներկայացրեց որպես ցեղասպան, թույլ տվեց անդրադառնալ այնպիսի թեմայի, որը հնարավորություն էր տալիս քննադատել Թուրքիայի Հանրապետության հիմնադիրներին. այս ամենը ներքաղաքական պայքարում և հասարակական ընկալումների փոփոխությունների հարցում ունեցավ կարևորագույն նշանակություն: Միով բանիվ, Էրդողանի ներողությունը Դերսիմի կոտորածների հետ կապված՝ առավելապես տեղավորվում է հենց ներքաղաքական, միջկուսակցական պայքարի համապատկերում և տրամաբանության մեջ:

Գրքում առկա են նաև Լիպարիտյանի դիտարկումները Թուրքիայի արտաքին գործերի նախկին նախարար Ահմետ Դավութօղլուի մի հոդվածի առիթով, որտեղ նա արձարծում է թուրքական ժխտողականության նոր, այլ շղարշով փաթեթավորված տարբերակը՝ «արդար հիշողության» տեսությունը, համաձայն որի՝ հայերի և թուրքերի հիշողությունն արդար կարող է լինել այն պարագայում, եթե հիշեն նախ երկու ժողովուրդների՝ հայերի և թուրքերի պատմության այն ժամանակները, երբ իրար հետ խաղաղ և լավ են ապրել: Սակայն էլ ավելի կարևոր է, որպեսզի հիշեն երկու կողմերի զոհերին և այն, որ, ըստ էության, 1915-ին տեղի են ունեցել միջէթնիկ բախումներ, որոնց հետևանքով եղել են զոհեր երկու կողմում էլ: Ինչպես արդեն նշվեց վերևում, սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Հայոց ցեղասպանության ժխտողականության նոր ոճ, սակայն Լիպարիտյանը, կարծես դրանք չնկատելով և ընդգծված հարգանք ցուցաբերելով Դավութօղլուի անձի հանդեպ՝ իր շոայլ գովասանքների կողքին, ինչպիսիսներից է «լայնածիր գիտութեան տէր անձ» և այլն, նշում է. **«Առանց կասկածով մտրենալու Դավութօղլուի՝ իր մտքերը հրապարակելու դրդապատճառներին** (ընդգծումը մերն է – Ռ. Մ.), ես

ինձ իրավունք վերապահեցի վերլուծելու նրա հողվածը...»⁴⁰: Նախ՝ մեղմ ասած, տարակուսանք է առաջացնում Լիպարիտյանի ձևակերպումը, թե ինքն առանց կասկածի է վերաբերվում բազմահմուտ քաղաքագետի, տվյալ պարագայում՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության ճարտարապետի և այդ համապատկերում՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում պայքարի նորոյրյա մշակողի մտքերը հանրայնացնելու դրդապատճառներին: Իսկ Դավութթյուրի հողվածում առկա խնդիրների և իր անհամաձայնությունների մասին Լիպարիտյանը քննադատությունը ներկայացնելուց առաջ գրեթե ներողություն է խնդրում ասելով, որ դրանց. *«...հուսով եմ, նախարարը կվերաբերվի նույնքան բարեսրտորեն, որքան, ինչպես հայրնի է, նա վարվում է առհասարակ անհամաձայնությունների բախվելիս»⁴¹*: Լիպարիտյանի այս նրբանկատ, գերկոռեկտ և քաղաքավարության բոլոր տարրերը պահպանող պահվածքն ընկալելի կլիներ, եթե նույն նրբանկատությամբ և հարգանքով նա արտահայտվեր և խոսեր Հայաստանի Հանրապետության նախկին իշխանությունների և, մասնավորապես, երկրորդ նախագահի հասցեին, որի հանդեպ ընդգծված կոպիտ, եթե չասեմ՝ չարացած վերաբերմունքն առկա է և՛ նրա գրքում, և՛ տարբեր լրատվամիջոցներին տված հարցազրույցներում:

Ինչևէ, Լիպարիտյանը, անդրադառնալով Դավութթյուրի հողվածին և ըստ էության գրախոսելով այն, տալիս է հարցեր, որոնք ես հիմա նույն կերպ պետք է հասցեագրեմ իրեն, քանի որ ինձ մոտ էլ են առաջացել ճիշտ նույն հարցերը. *«Ինչպես պետք է ընթերցենք այս հողվածը: Սա գիտական շարադրանք է պատմության մասին: Անախորժ իրադրության վերլուծությունն քաղաքագետի կողմից: Թե՛ ներկայումս նախարարի պաշտոնի բեռան տակ կքած նախկին հասարակագետի մտավոր դեգերում է»⁴²*: Ինչպես ընթերցենք Լի-

⁴⁰ Նույն տեղում, էջ 294:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում:

պարիտյանի այս գիրքը. գիտական շարադրանք հայ-թուրքական հարաբերությունների մասին, քաղաքագետի վերլուծություն տարածաշրջանային զարգացումների վերաբերյալ, թե՛ նախկին պաշտոնյայի և իր անձնական բացասական վերաբերմունքի բեռան տակ կքաճ և դրանից ազատվել չկարողացող անձի մտավոր դեգերումներ կողմնակալության և սուբյեկտիվիզմի ծիրում:

Կրկին անդրադառնալով Ժ. Լիպարիտյանի՝ Թուրքիայի պատմության իմացության պակասին՝ պետք է փաստեմ, որ նա փաստերի և գիտելիքների իմացության պակաս է դրսևորում նաև Խորհրդային Հայաստանի պատմության հատկապես որոշակի դրվագների վերաբերյալ: Այսպես, ըստ Լիպարիտյանի կատեգորիկ պնդման. *«Սովետական Հայաստանը Թուրքիոյ նկարմամբ որեւէ քաղաքականութիւն չէ ունեցած, որովհետեւ արտաքին եւ պետական ապահովութեան քաղաքականութիւնները Մոսկուայի իրաւասութեան տակ էին, իսկ Մոսկուան բնականոն յարաբերութիւններ ունէր Թուրքիոյ Հանրապետութեան հետ»*⁴³: Պետք է հստակ ասեմ, որ այս հարցում ևս Լիպարիտյանը սխալվում է, քանի որ Խորհրդային Հայաստանի տարբեր ղեկավարներ, չնայած ԽՍՀՄ-ում առկա որոշակի սահմանափակումներին, իրենց հստակ դիրքորոշումը և քայլերն են արել Թուրքիայի հետ կապված. այդ քայլերի մի մասը երբեմն եղել է սիմվոլիկ, արարողակարգային, սակայն, այնուամենայնիվ, ի ցույց է դրել մի կողմից՝ պետական մտածողության, իսկ մյուս կողմից՝ պատմական հիշողության հստակ առկայությունն այդ երախտավոր պետական գործիչների մոտ: Ուստի, խորհուրդ կտամ պարոն Լիպարիտյանին կարդալ և ծանոթանալ Խորհրդային Հայաստանի ղեկավարներ Գրիգոր Հարությունյանի (Արութինով), Յակով Զարուբյանի, Անտոն Քոչինյանի, Կարեն Դեմիրճյանի քայլերին, որոնք վերաբերում են ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ պատմական Հայաստանի տարածքների, սփյուռքահայերի ներգաղթի, հողային պահանջատիրության, Արցախի և այլ

⁴³ Նույն տեղում, էջ 39:

հարցերին: Խորհուրդ կտամ նաև կարդալ հայ գնդապետ Գուրգեն Նալբանդյանի գործունեության մասին, որը, լինելով խորհրդա-թուրքական պետական սահմանի վերասահմանագծման հանձնա-ժողովի անդամ, հերոսական պահվածք է դրսևորել⁴⁴:

Բայց մի կողմից զարմանալի են, մյուս կողմից՝ «շանտաժի» տարրեր են պարունակում Լիպարիտյանի տարբեր հարցազ-րույցներում որոշակի մեծամտության անթաքույց դրսևորմամբ մտքերն առ այն, որ Հայաստանում, այդ թվում և արտաքին գոր-ծերի նախարարությունում, չեն ճանաչում իրական Թուրքիան, չգիտեն, թե դա ինչ պետություն է: Օրինակ, հարցազրույցներից մեկում Լիպարիտյանն ասում է, որ Թուրքիայի ԱԳՆ-ն շատ ուժեղ է, պատմում է դրա կառուցվածքի և աշխատակիցների մասնա-գիտացման առանձնահատկությունների մասին և ասում. «Մե-րոնք չեն հասկանում այդ ինչ տեսակ պեպություն է, դա պեպք է հասկանաս և գործես: Մերոնք ընդհանրապես չեն հասկանում: Ես չեմ գիտեր Հայաստանի մեջ որևէ դիվանագետ կա, որ այս ամենը գիտե»⁴⁵: Սա ասում է մի մարդ, որ հենց ինքն է ի ցույց դնում իր խոցելի գիտելիքները Թուրքիայի մասին, դրական գույ-ներով ներկայացնում թուրքական քաղաքականությունը և, ըստ էության, հայկական հասարակությանը կոչ անում «ազատվել կարծրատիպերից» ու չպայքարել հակահայկական քայլերի դեմ: Չժխտելով, այլ, ընդհակառակը, փաստելով, որ Թուրքիան և նրա արտաքին քաղաքականությունը բավական ուժեղ և վտանգա-վոր են, այնուամենայնիվ, չենք կարող համաձայնել Լիպարիտյա-նի տոտալ նիհիլիստական մոտեցմանը Հայաստանի պետական համակարգում Թուրքիայի մասին իմացության վերաբերյալ:

⁴⁴ Մելքոնյան Ռ., «Կարսի բարդույթը», հայ գնդապետը եւ 1973թ. խորհրդա-թուրքա-կան սահմանի ռեդեմարկացիան, <https://mediamax.am/am/news/special-file/47201/>

⁴⁵ <http://boon.am/the-exes-in-politics-jirair-libaridian-mikael-zolyan/>

ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԼԻՊԱՐԻՏՅԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԿԱՏԵԳՈՐԻԿ ՄՏՔԵՐԻ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐ

Չնայած ես ինձ չեմ համարում Արցախի խնդրի խորագիտակ մասնագետ, բայց Լիպարիտյանի կատեգորիկ գնահատականները, որոնք վերաբերում են Արցախի հարցի որոշ դրվագներին, հարցականներ են առաջացրել, մանավանդ, երբ դրանք համադրում եմ տարբեր փաստագրական վերլուծությունների, ՀՀ երեք նախագահների հարցազրույցների, հրապարակված բանակցված փաստաթղթերի հետ: Այսպես, Լիպարիտյանն անառարկելի տոնով գրում է հետևյալը. *«Այիե եւ Քոչարեան սկզբունքօրէն համաձայնութիւն կայացուցին Ղարաբաղեան հարցը լուծել Ազրպէյճանի ու Հայաստանի միջեւ փարածքային փոխանակման հիմունքով: Ազրպէյճանը Հայաստանին զիջելու էր Ղարաբաղը, իսկ Հայաստանն, իր հերթին, Ազրպէյճանին յանձնելու էր Հայաստանի հարաւը՝ Մեղրիի շրջանը, որ Իրանի եւ Թուրքիոյ սահմանակից Նախիջեանը կը բաժնէր Ազրպէյճանի գլխաւոր մասէն: Տարբեր պայմաններով անհրազորօճելի այդ ծրագիրը յառաջ չգնաց»*⁴⁶: Նման հայտարարություն կամ, կարելի է ասել՝ լուրջ մեղադրանք ներկայացնել և սահմանափակվել մեկ նախադասությամբ, թե տարբեր պատճառներով դա տեղի չունեցավ՝ առնվազն լուրջ չէ: Արցախի հարցով բազմաթիվ փաստերի և նրբերանգների տիրապետող Լիպարիտյանն անգամ հարկ չի համարում իր ընթերցողներին թեկուզ հպանցիկ ներկայացնել, թե «Ալիևի և Քոչարյանի միջև սկզբունքային համաձայնությունը» իբրև թե տարածքների փոխանակման մասին՝ տխրահոշակ «Գորլի ծրագիրն» էր, Քի Ուեսթում քննարկվածը, թե՛ մեկ այլ փաստաթուղթ:

⁴⁶ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, էջ 55-56:

Որևէ բացատրություն չկա, և սա լրջորեն իջեցնում է այս աշխատանքի գիտական-փորձագիտական մակարդակը՝ այն դարձնելով դեղին մամուլում տպագրվող նյութերի ժանրին հարիր աշխատանք: Պետք է տարբերակում մտցնել՝ ի վերջո, սա փորձագիտական կամ գիտական աշխատանք է, թե՛ «ղայֆեի սեղանի շուրջ կենցաղային բամբասանք» կամ «բեսեդկայի քաղաքագիտական գրույց»:

Նույն կերպ քաղաքական, այլ ոչ թե փորձագիտական կամ, առավել ևս, գիտական ձևակերպում կարելի է համարել Լիպարիտյանի հետևյալ արտահայտությունը. *«Իմ կարծիքով՝ Քոչարեան Ղարաբաղի հարցը լուծելու ցանկություն չունէր»*⁴⁷: Չնայած ավելի ուշ ակնհայտ՝ ոչ առանց էմոցիաների գրում է հետևյալ միտքը. *«Իր իշխանության տասը տարիների ընթացքում Քոչարյանը որոշ թուլակամ փորձեր արեց ԼՂ հակամարտության լուծման ուղղությամբ, սակայն դա եւս նրա օրակարգի առաջնային խնդիրներից չէր»*⁴⁸: Կրկին մերկապարանոց և առանց փաստարկների կամ «իմ կարծիքով» իբրև թե հիմնավորված մտքերը նույնիսկ արժանի չեն մեկնաբանման, ուղղակի ևս մեկ անգամ ուշադրություն դարձնենք այն բառամթերքին, որով Լիպարիտյանն արտահայտվում է Արցախի առաջին նախագահի և Հայաստանի երկրորդ նախագահի մասին և այն գերուշադիր ու գերքաղաքավարի ձևակերպումներին, որոնք շոայլում է թշնամական երկրի՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Դավութօղլուի հասցեին: Օրինակ՝ *«Քոչարյանի հիշողությունն ու դատողությունը այնքան ցածր մակարդակի վրա են, որքան իր հարստությունը բարձր է»*⁴⁹, բայց *«Դավութօղլուն լայնածիր գիտութեան տէր անձ է»*: Ատելությունն էլ, քաղաքական հակասություններն էլ պետք է տրամաբանության և բարոյականության սահմաններ ունենան:

⁴⁷ Նույն տեղում, էջ 77:

⁴⁸ Նույն տեղում, էջ 205:

⁴⁹ Նույն տեղում, էջ 420:

ՅՅՈՒՐԻԽՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ Ժ. ԼԻՊԱՐԻՏՅԱՆԸ

2008-2009թթ. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ Լիպարիտյանն ընդհանուր առմամբ դրական է արտահայտվում, քանի որ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելն իր և իր ներկայացրած քաղաքական թիմի առաջնահերթություններից էր: Սակայն խոսելով 2009թ. ցյուրիխյան հայ-թուրքական արձանագրությունների մասին՝ Լիպարիտյանն անում է մի կատեգորիկ և անհիմն պնդում, որը լրջորեն ստվեր է գցում ընդհանուր ասվածի վրա: Այսպես, հստակ նշելով, որ այդ արձանագրությունների տեքստում չկա թուրքական հայտնի նախապայմանը՝ կապված Արցախի հետ, նա գրում է. «Փաստորէն, այդ արձանագրութիւններուն մէջ Ղարաբաղեան հարցի ուղղակի նշում կամ յղում չկար: ...Յեղասպանութիւնը ժխտելու մասին նոյնպէս ուղղակի ակնարկ չկար այդ փաստաթուղթերուն մէջ», սակայն այս ձևակերպումից հետո Լիպարիտյանն ավելացնում է, որ պետք է ստեղծվեր միջպետական հանձնաժողով, որի ենթահանձնաժողովներից մեկը պետք է զբաղվեր պատմությանը վերաբերող հարցերով. «... յանձնաժողով մը, որ պիտի զբաղէր պատմագրութեան մէջ առկայ թուրք-հայ յարաբերութիւններու հարցերով, այսինքն՝ Յեղասպանութեան հարցով»⁵⁰: Այստեղ կրկին աչքի է զարնում անհիմն, առանց փաստարկների և միայն հենված «իմ կարծիքի» վրա արված վերլուծությունը: Միթե հայ-թուրքական հարաբերությունների պատմության մեջ չկան այլ խնդիրներ, որ առանց այլևայլության և անբեկանելի ոճով Լիպարիտյանը համոզմունք է հայտնում, որ դա կարող է վերաբերել միայն Հայոց ցեղասպանության հարցին: Խոստովանելով, որ այդ արձանագրութե-

⁵⁰ Նույն տեղում, էջ 63:

յունները դիվանագիտական տեքստեր են և առկա է տարբեր եզրահանգումներ անելու հնարավորություն՝ «կոնստրուկտիվ երկինաստություն» (որը Լիպարիտյանը որակում է որպես երկու պետությունների կողմից ինքնախաբեության փորձ), սակայն չի կարելի միանշանակ պնդում անել, որ ըստ Ցյուրիխյան արձանագրությունների՝ այդ հանձնաժողովը զբաղվելու էր Հայոց ցեղասպանության խնդիրը քննարկելով: Պարզ է, որ Թուրքիան ցանկանալու էր քննարկել Հայոց ցեղասպանության հարցը, բայց հայկական կողմն էլ այդ հնարավոր ենթահանձնաժողովի օրակարգ էր բերելու այլ հարցեր և, ըստ էության, միասնական օրակարգ ու, հետևաբար, քննարկում այդպես էլ տեղի չէր ունենալու: Բայց Լիպարիտյանը «երկաթյա տրամաբանությամբ» կրկին պնդում է. «*անոնք ունէին անուղղակի, սակայն յստակ ակնարկ Յեղասպանութեան հարցին*»⁵¹: Կամ արձանագրության մեջ նշված պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ, գիտական ուսումնասիրությունը, ըստ Լիպարիտյանի. «*Բոլորին համար պարզ էր, որ այս կէտը կը վերաբերէր Յեղասպանութեան խնդրին*»⁵²: Այս մտքերն արտահայտող գիտնականը պետք է գոնե մեկ-երկու հիմնավորում կամ փաստարկ բերի, սակայն Լիպարիտյանը բավարարվում է միայն «բոլորի համար պարզ էր», «իմ կարծիքով» և նմանատիպ այլ արտահայտություններով: Սրանք այլ կերպ, քան քարոզչության մեջ տարածված և ad populum՝ «հղում բոլորին», անվանված երևույթ բնութագրել հնարավոր չէ: Ի դեպ, ավելորդ չենք համարում նշել, որ Ցյուրիխյան արձանագրությունները և կոնկրետ դրանցում Հայոց ցեղասպանության իբրև թե քննարկման համար ենթահանձնաժողովի ստեղծումը ճիշտ Լիպարիտյանի պես էին մեկնաբանում Դավութթոլուն և Թուրքիայի իշխող կուսակցության տարբեր անդամ-

⁵¹ Նույն տեղում, էջ 275:

⁵² Նույն տեղում:

ներ՝ ի պատասխան թուրքական ընդդիմության քննադատությունների:

Ամենավերջում ուզում եմ վարկած կամ ենթադրություն հայտնել այն մասին, որ Լիպարիտյանի այս չհիմնավորված մեկնաբանությունների մեջ կարող են լինել «մասնագիտական խանդի» տարրեր, քանի որ հայ դիվանագետներին հաջողվել էր ստանալ մի փաստաթուղթ՝ Ցյուրիխյան արձանագրությունները, որտեղ, դիվանագիտական երկիմաստության առկայությամբ հանդերձ, որևէ հետընթաց և զիջում Հայաստանի համար կարևոր կարմիր գծերից չկային: Սակայն պարոն Լիպարիտյանը ստիպված է ընդունել, որ դա ոչ թե առանձին դիվանագետների կամ տվյալ պահի քաղաքական թիմի, այլ մեր պետականության ձեռքբերումն ու հաջողությունն էր, ուստի պետք է փորձեր այդ տեսանկյունից, իր ուժերի ներածին չափով անկողմնակալ նայել այդ ամենին:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ «ԱԶԳԱԿՈՐԾԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ»

Ինչպես և կարելի էր ակնկալել, Ժ. Լիպարիտյանը թե՛ 2020թ. պատերազմից առաջ, թե՛ դրանից հետո գործող իշխանությունների մասին արտահայտվում է կամ ընդգծված դրական, կամ առնվազն ոչ քննադատական. բացառություն են կազմում, օրինակ՝ Սևրի պայմանագրի 100-ամյակի կապակցությամբ արված միջացառումը և նմանատիպ թեմաները, որոնք խռովում են Լիպարիտյանի հոգին և նրան ստիպում մեղմ քննադատական խոսքեր ասել ներկայիս իշխանությունների հասցեին: Իսկ նրանց գործած կոպիտ և կործանարար հետևանքներ ունեցած սխալներին ու քայլերին Լիպարիտյանը, ըստ էության, չի էլ անդրադառնում: Օրինակ՝ իր գրքի շնորհանդեսից հետո, 2022թ. մարտին Բուն TV-ի եթերում Լիպարիտյանն ընդգծված մեղմ և դրական է արտահայտվում ներկայիս իշխանությունների հասցեին, նա չի էլ քննարկում 2020թ. աղետից հետո այդ ամենի հիմնական պատասխանատու քաղաքական ուժի իշխանության մնալ-չմնալու հարցը, անգամ չի էլ անդրադառնում «Արցախը Հայաստան է և վերջ» հակադիվանագիտական արտահայտությանը և դրա հեղինակին⁵³: Սրանք ընդամենը փոքր դրվագներ են, որոնք ի ցույց են դնում ոչ միայն Լիպարիտյան փորձագետի, այլև Լիպարիտյան անձի գերկողմնակալ և ոչ օբյեկտիվ բնույթը: Այլապես վրոդվել Սևրի պայմանագրի մասին գիտաժողովի անցկացման փաստով և չնկատել այս պահի իշխանությունների պետականաքանդ բազմաթիվ քայլերը՝ առնվազն պարզունակ խուսանավում է:

Լիպարիտյանը դեռևս 2020թ. պատերազմից առաջ նշում էր, որ Փաշինյանը մի քանի կարևոր և փոքր քայլեր արել է Ադրբե-

⁵³ <http://boon.am/boon-talks-foreign-policy-anna-gevorgyan-jirair-libaridian/>

ջանի հետ փոխվստահությունն ավելացնելու ուղղությամբ. «Սակայն ան տակաւին պատրաստ չի թուիր Լեոնային Ղարաբաղի հարցով խաղաղութեան տանող աւելի հիմնական եւ յանդուգն քայլեր առնելու: Առանց այդ ոլորտին մէջ յառաջադիմութեան դժուար է Թուրքիոյ հետ յարաբերութիւններու մէջ լուրջ տեղաշարժ պատկերացնել»⁵⁴: Բայց տարակուսելին այն է, որ 2020թ. պատերազմից հետո Հայաստան եկած և խորհրդարանում, մամուլում ակտիվորեն հանդես եկող Լիպարիտյանը չի անդրադառնում Փաշինյանի կառավարության արած «հանդուգն քայլին», որի հետևանքով կորցրեցինք Արցախի մեծ մասը և հայտնվեցինք արտաքին քաղաքական, ռազմական ծանրագույն վիճակում: Բացի այդ, հետաքրքիր է նաև այն, որ Լիպարիտյանը կամ չի կիսում, կամ այդ հարցում խուսափում է անդրադառնալ առաջին նախագահ Տեր-Պետրոսյանի կողմից Փաշինյանին և նրա իշխանությանը տված որակմանը՝ «ազգակործան պատուհաս»:

Ճակատագրի հեգնանքով 2020թ. սեպտեմբերի 26-ին, պատերազմից մեկ օր առաջ պատրաստվել է Լիպարիտյանի հետ հարցազրույց, որը չի հրապարակվել, բայց տեղ է գտել նրա գրքում: Այդ հարցազրույցում Լիպարիտյանին լրագրողը հիշեցնում է 2018թ. հունիսին տված հարցազրույցից մի հատված՝ «Բոլորս ամեն ինչ պետք է անենք, որ Նիկոլ Փաշինյանը հաջողի եւ ավարտին հասցնի այս գործը» հիմա արդեն չարագուշակ ճակատագրապաշտական հնչող պատասխանը և հարցնում, թե արդյոք Լիպարիտյանը շարունակում է մնալ նույն կարծիքին, ինչին նա արձագանքում է. «Տակավին նույն կարծիքին եմ: Փաշինյանին եւ իր ղեկավարած իշխանությանը պետք է ստորար կանգնել ամեն ձեռով, ինչպես հնարավոր է»⁵⁵:

⁵⁴ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, էջ 64:

⁵⁵ Նույն տեղում, էջ 417:

Սակայն Լիպարիտյանի գերկողմնակալ, ոչ օբյեկտիվ վերաբերմունքն ամենալավը բացահայտում է հենց ինքը՝ Լիպարիտյանը: Օրինակ, ստորև ներկայացվող մեջբերումը գրքի շնորհանդեսից հետո ի պատասխան քննադատներին գրած իր հողվածից բազմաթիվ հարցեր է առաջացնում. «*Ի վերջո, յուրաքանչյուր քաղաքացի, որն ուզում է մտածել ու գիտակցված եզրակացության հասնել, պետք է ինքն իրեն հարց փա. ովքեր են, որ վրանգ ներկայացրին և ներկայացնում են հիմա էլ, ովքեր են այլ պետությունների ջրադացին ջուր լցնողները: Նրանք, ովքեր իրապետորեն զգուշացրին պատերազմի անխուսափելիության և այդ պատերազմը կորցնելու հավանականության մասին, ովքեր փորձեցին փոխզիջումների հիման վրա, նվազագույն վնասներով հակամարտությունը կարգավորել և Արցախին ու Հայաստանը զերծ պահել ավելի մեծ աղետներից: Թե՛ նրանք, ովքեր գերհայրենասիրական լուզունգներով՝ «ոչ մի թիզական», այսպես կոչված՝ պահանջատիրական, մեզ շրջապատող իրականությունների անտեսմամբ ու ցնորային սցենարներով մեր բախտը պատերազմի՝ և ո՛չ խաղաղության հետ կապելով, մեզ տարան այդ պատերազմին՝ անասելի և բազմաթիվ առումներով անդառնալի կորուստներ պատճառելով և՛ Հայաստանին, և՛ Արցախին»⁵⁶: Թվում էր, թե այս որակումները տալուց հետո Լիպարիտյանի ձաղկող քննադատական նետերն ուղղվելու էին փաշինյանական իշխանությանը, բայց ոչ, ներկայիս իշխանությունների մասին ոչինչ չկա. հարց է առաջանում. ո՞ւմ են ուղղված այս խոսքերը, ո՞վ է հասցեատերը, ո՞վ է մեղավորը: Տրված բնութագրումները լիովին վերաբերում են հենց այս պահի իշխանության գործելաոճին, բայց «օբյեկտիվ» Լիպարիտյանը «օդ է կրակում», չի տալիս որևէ անուն:*

Բայց կրկին մի վարկած կարելի է առաջ քաշել, որ տեքստում առկա «ոչ մի թիզական» եզրույթը բանալի բառ է՝ հասկանալու

⁵⁶ Ժ. Լիպարիտյան, Մի քանի խոսք «քննադատների» մասին, Առավոտ, 21, 12, 2021:

լիպարիտյանական տրամաբանությունը. առավելապես նախկին իշխանություններին և դրանց որոշակի շրջանակներին քննադատելու համար առաջին նախագահի և նրա շրջապատի կողմից կիրառվող այս տերմինը հուշում է, որ Լիպարիտյանի վերոբերյալ տեքստում կրկին որպես թիրախ ընտրված են ոչ թե ներկա իշխանությունները, այլ նախկինները: Այլապես դժվար չէր անվանական և հասցեական նշել 2020թ. պատերազմի, դրան նախորդած դիվանագիտական աշխատանքը տապալող հիմնական պատասխանատուներին՝ օրվա իշխանություններին:

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱԶՈՒՄԸ

Ժ. Լիպարիտյանին կարծես շատ է անհանգստացնում այն խնդիրը, որ հայերն ու թուրքերն իրար լավ չեն ճանաչում: Խոստովանեմ, որ դա, իրոք, կարևոր հարց է, քանզի Թուրքիայի, թուրքական հասարակության իրական և խորքային ճանաչումը Հայաստանի և հայերի համար ունի գերկարևոր նշանակություն: Սակայն Լիպարիտյանն այս հարցում ևս չի կարողանում խուսափել կատեգորիկ և դրանով նաև խիստ խոցելի ձևակերպումներից: Օրինակ՝ *«Սփիւռքի հայերուն մեծ մասը երբեք թուրքի չէ հանդիպած: Նոր սերունդի հայերու մտքին մէջ «թուրք»ը վերածուած է վերացական էակի մը, որուն աւելի հեշտ է արեւ, քան ճանչնալ»*⁵⁷: Շարունակելով թուրքին չճանաչելու թեման՝ Լիպարիտյանը ծեծված և գրեթե արխայիկ մի բնորոշում է տալիս ներկա հայ-թուրքական փոխադարձ ընկալումներին հատկապես հայերի տեսանկյունից. *«Այդ շրջագիծին մէջ ռեւէ թուրք կը մարմնացնէր հազար տարի առաջուայ ներխուժողը, հարիւր տարի առաջուայ մարդասպանը, այսօրուայ ժխտողը եւ այդ բոլորը՝ միաժամանակ: Թուրքը այլ բնութագիր չունէր»*⁵⁸: Ես չգիտեմ, թե Լիպարիտյանը որտեղի և որ թվականների մասին է այսպիսի նկարագրություն անում, սակայն մանավանդ ներկայիս համացանցի դարում նման սահմանափակ ընկալումներ վերագրել մի ամբողջ ազգի կամ թեկուզ նրա սփյուռքին՝ առնվազն օբյեկտիվ չէ, իսկ գիտականության մասին խոսելն անտեղի է: Հետաքրքիր է, որ ըստ Լիպարիտյանի՝ հայի ընկալումը թուրքերի կողմից շատ ավելի մեղմ է, անգամ դրական. *«Թուրքերուն համար*

⁵⁷ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, էջ 178:

⁵⁸ Նույն տեղում:

«հայ»ը լաւագոյն պարագային իրենց թաղամասին սիրալիր ու անվնաս հացթուփն է, վարագոյն պարագային անցեալէն եկող խանգարող միտք մը՝ մղուած ուղեղի մոռցուած որմնախորշին. հայը խոռվարար է, զրպարտիչ ու ահաբեկիչ»⁵⁹: Այսինքն՝ ըստ Լիպարիտյանի, ի տարբերություն հայերի ընկալման՝ թուրքերի ընկալումն ավելի լայն է. կա լավագոյն պատկերացումը՝ սիրալիր և անվնաս հացթուփ, և կա վատագոյնը՝ խոռվարար, զրպարտիչ, ահաբեկիչ հայ, սակայն հեղինակը փոքր-ինչ մանվածապատ ձևակերպմամբ դա համարում է անցյալից եկող խանգարող միտք, որն «ուղեղի մոռացված որմնախորշին է մղված»:

⁵⁹ Նոյն տեղում:

ԹՈՒՐՔԻԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԷ, ՉԻ ՀԱՐՁԱԿԿԻ

Գրախոսվող գրքի ամենախոցելի և, միևնույն ժամանակ, հայկական հասարակությանն ապակողմնորոշելու առումով ամենավտանգավորը Լիպարիտյանի այն մտքերն ու վերլուծությունն են, թե Թուրքիան սպառնալիք չէ Հայաստանի և հայերի համար: Նշվածի շրջանակներում պետք է դիտարկենք այն, որ ըստ Լիպարիտյանի՝ սուտ կամ կեղծ էին այն մտավախությունները, թե Թուրքիան 1990-ականների սկզբներին ցանկացել է զինված հարձակում գործել Հայաստանի Հանրապետության վրա: Այսպես, 1993-ին Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալի հայտարարությունը Հայաստանի վրա հարձակվելու մասին Լիպարիտյանն այսպես է մեկնաբանում և մեղադրելով քննադատներին՝ սկսում է արդարացել Թուրքիային. «Նրանք (քննադատները) չափազանցում էին Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալի հայտարարության կարեւորությունը, որն արվեց 1993 թ.-ին՝ հայկական ուժերի կողմից Քելքաջարը գրավելուց հետո»⁶⁰:

Հիշեցնենք, թե ինչ էր հայտարարել Օզալը. օրինակ՝ Սեմյուել Հանթիգտոնն իր հայտնի «Քաղաքակրթությունների բախումը» գրքում մեջբերում է 1992թ. Թուրքիայի նախագահի հետևյալ հայտարարությունը. «Թուրքիան պետք է մի փոքր վախեցնի հայերին: Մեկ փարի անց Օզալը դեռ մարտական էր տրամադրված: «Բնչ կարող են անել հայերը, եթե կրակոցներ լինեն, – հեզնում էր նա, – շքերթով մտնելու են Թուրքիա: Թուրքիան ցույց կտա իր ժանիքները»⁶¹: Ամերիկյան գաղտնագերծված փաստաթղթերում նույնպես հանդիպում ենք փաստերի Հայաստանի դեմ Թուրքիայի հավանական հարձակման մասին. «Մայիսի 21-ին Մոսկվայում Թուրքիայի դեսպանության աղբյուրները փոխանցում են,

⁶⁰ Նույն տեղում, էջ 203:

⁶¹ Հանթիգտոն Սեմյուել, Քաղաքակրթությունների բախումը, Երևան, 2021, էջ 428:

որ թուրքական զորքերը զբաղեցրել են համապատասխան դիրք և պատրաստվում են հակահարված տալ հայկական զորքերին, որոնք «փորձելու են հարձակվել Նախիջևանը Թուրքիային կապող կամրջի վրա»⁶²:

Հայաստանի վրա հարձակվելու թեման անգամ արժարժվել է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի (ավագ) և Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի հեռախոսազրույցում. «Մայիսի 11-ին ԱՄՆ նախագահ Բուշը հեռախոսազանգ է ստանում Թուրքիայի վարչապետ Դեմիրելից, այն տևում է 11 րոպե:

– ԼՂ հարցում, ես տեղյակ եմ, որ Դուք ստացել եք մեր ուղերձը: Մենք ցանկանում ենք, որ խաղաղություն հաստատվի: Նաև հասկանում եմ, որ Ձեր վրա ներքին ճնշում կա: Ես **Ձեզ կոչ եմ անում զսպվածություն ցուցաբերել և ռազմական ինտերվենցիայից զերծ մնալ: Իրավիճակը չափազանց բարդ է** (ընդգծումը մերն է – Ռ.Մ.), – *ասում է Բուշը*⁶³:

Նկարագրելով Արցախյան առաջին պատերազմում Թուրքիայի հավանական ուղղակի մասնակցության հարցը (քանի որ անուղղակի արդեն իսկ մասնակցում էր)՝ Լիպարիտյանը ավելի է խորանում անիրատեսության ճահճուտում և անում արտահայտություններ, որոնք իրականության հետ կապ չունենալով հանդերձ՝ թշնամական երկիր Թուրքիայի բացահայտ գովերգման դրսևորումներ են. «Ղարաբաղում եւ նրա շուրջ ընթացող պատերազմը շարունակվեց մինչեւ 1994թ. մայիսը: Այդ տարիների վատագույն՝ 1992-1993թթ. ծմռան ընթացքում Թուրքիան, որն իբրեւ թե առիթի էր սպասում Հայաստանում հայերին վերացնելու համար, բացեց իր երկաթուղային գծերն ու սահմանը՝ Եվրոպայի նվիրած ալյուրը Հայաստան տեղափոխելու համար: ...այսպիսով, Թուրքիան փրկեց նույն այդ բնակչությանը հավանական

⁶² Սարգսյան Ս., Հայաստանն ու Բուշն անձամբ. (1988-1992) հայ-ամերիկյան շփումների գաղտնագրված մանրամասներ, Երևան, 2022, էջ 259:

⁶³ Նույն տեղում, էջ 247-248:

սովից»⁶⁴: Չժխտելով, որ տարբեր իրողությունների և պայմանավորվածությունների արդյունքում Թուրքիան թույլ է սովել իր տարածքով այլուր տեղափոխել Հայաստան, ավելին՝ նույնիսկ ինքն է ցորեն վաճառել մեր երկրին, սակայն սա որպես «հումանիզմի ջատագով Թուրքիայի» կերպարի ապացույց ներկայացնելու համար պետք է վառ երևակայություն ունենալ: Շարունակելով Թուրքիան գովելու անխոնջ ջանքերը և «խորքային վերլուծությունները»՝ Լիպարիտյանը գալիս է հետևյալ եզրահանգման. «*Նույնիսկ ամենից անբարենպաստ պայմաններում Թուրքիան չհարձակվեց Հայաստանի վրա»⁶⁵*: Կրկին առանց հիմնավորման կարծիք, այս անգամ՝ անտեսելով նաև այդ տարիներին ստեղծված աշխարհաքաղաքական վիճակը, որը թույլ չսովեց Թուրքիային ագրեսիա անել Հայաստանի հանդեպ: Ուստի, եթե ուզում ենք օբյեկտիվ ձևակերպում տալ այս խնդրին, ապա պետք է շեշտենք, որ Թուրքիան ոչ թե *չուզեց հարձակվել*, այլ *չկարողացավ հարձակվել* Հայաստանի Հանրապետության վրա. սրանք լիովին տարբեր երևույթներ են:

Ձարմանալի կամ միգուցե օրինաչափ է, որ Լիպարիտյանն իր կարծիքը Թուրքիայի՝ Հայաստանի համար սպառնալիք չհանդիսանալու հետ կապված, չի փոխել անգամ 2020թ. պատերազմից հետո: 2021թ. նա բառացի ասում էր. «*Ես Ադրբեջանից և Թուրքիայից վրանգ չեմ տեսնում»⁶⁶*: Սա արդեն վստահորեն կարելի է համարել «հաստատական մոլորություն», քանի որ այդ մտքերի հեղինակը և թուրք-ադրբեջանական տանդեմից վտանգը բացառողը տասնամյակներով հավատացել և քարոզել է այդ գաղափարը, իսկ 2015թ. գրած մի հոդվածում շարունակելով

⁶⁴ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, էջ 203:

⁶⁵ Նույն տեղում, էջ 204:

⁶⁶ «Ես Ադրբեջանից ու Թուրքիայից վրանգ չեմ տեսնում». Ժիրայր Լիպարիտյան, <https://168.am/2021/12/14/1623877.html>

«Թուրքիայից սպառնալիք չկա» թեզը՝ գրում էր. «...Հայաստանի ղեկավարներն ու ՋԼՄ-ները քննարկում են, թե ինչ անել Թուրքիայի ներխուժման դեպքում՝ ստրեղծելով փոփոխություն, թե իբր հարձակման մոտալուր վտանգ կա»⁶⁷: Սակայն ուշագրավ է, որ Թուրքիայի չհարձակման հարցում այսքան վստահ մարդիկ չեն խոստովանում, որ 2020թ. 44-օրյա պատերազմում Թուրքիան ուղղակի և անուղղակի ներգրավված էր, այդ մասին հայտարարել և հիմա էլ շարունակում են հայտարարել այդ երկրի նախագահ Էրդոդանը, պաշտպանության, արտաքին գործերի նախարարները: Լիպարիտյանը և ուրիշներ, որոնք այդքան հպարտանում են իրենց չարագուշակ կանխատեսումների իրականացման համար, ինչհետև են լռում, որ որպես փորձագետ, քաղաքագետ և մասնագետ ուղղակի սխալվել են, իրենց թեզերը տապալվել են, որովհետև Թուրքիան 2020-ին ուղղակի և անուղղակի մասնակցել է Արցախի դեմ պատերազմին, Էրդոդանը պատերազմից հետո մասնակցել է Բաքվում տեղի ունեցած զորահանդեսին, ազգայնամոլական շեշտադրումներով ելույթ ունեցել այնտեղ: Ի դեպ, ցավով պետք է փաստեմ, որ Լիպարիտյանն ունի նաև հետևորդներ այս «ճշգրիտ կանխատեսումների» հարցում ինչպես իշխանության մեջ, այնպես էլ իշխանամերձ որոշ շրջանակներում, որոնք 2020թ. պատերազմից առաջ ծաղրական գրառումներով, հանրային հեռուստատեսությամբ շեփոքում էին, թե Թուրքիայի՝ Հայաստանի վրա հարձակման հավանականության մասին լուրերը չափազանցված են, անգամ հակառակը պնդողներին անվանում էին «խուճապիստներ», բայց պարզվեց, որ ճիշտ էին անհանգստացողները:

Շարունակ և տարբեր հոդվածներում վերադառնալով «Թուրքիան սպառնալիք չէ» թեզին՝ Լիպարիտյանը ևս մեկ անգամ

⁶⁷ Լիպարիտյան Ժ., Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն, էջ 208:

ամփոփիչ կարծիք է հայտնում. «Այդուհանդերձ, հստակ է, որ վերջին 25 տարում Թուրքիան իրեն չի պահել այնպես, ինչպես կանխատեսում էին թուրքի էության տեսաբանները, թեև այդ երկրին կարելի է մեղադրել նրանում, որ չկարողացավ հաղթահարել Ադրբեջանի հանդեպ իր զգացումները եւ փարածաշրջանային քաղաքականության մեջ կարճատեսությունն ցուցաբերեց»⁶⁸: Նախ՝ Լիպարիտյանի «խիզախ» քննադատության համեստ փորձը Թուրքիայի հանդեպ կրկին խոցելի է, և Թուրքիան ոչ թե «Ադրբեջանի հանդեպ իր զգացումները չի հաղթահարել», այլ որդեգրել է քաղաքական այնպիսի գիծ, որի մեջ կարող ենք տեսնել ն պանթյուրքիստական ուղենիշներ, ն 100 տարի առաջվա կիսատ թողած թուրք-ադրբեջանական միասնական ծրագրեր, ն «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսի տրամաբանություն: Թուրքիայից վտանգ չտեսնելու հարցում անուղղելի լավատես Լիպարիտյանն այսքանից հետո դարձյալ չի հավատում Թուրքիայի՝ Հայաստանի համար սպառնալիք լինելուն և, չբավարարվելով դրանով, իր քննադատության սուր սլաքներն է ուղղում հակառակ կարծիք ունեցող շրջանակների դեմ. «Ըստ այդ մտայնման՝ Թուրքիան պէտք էր յարձակած ըլլար Հայաստանի վրայ՝ մեր անկախութեան առաջին իսկ օրերուն: Այդ բանը չպատահեցաւ այդ ժամանակ ու չէ պատահած անկէ ի վեր, երբ Հայաստանը կը յաղթէր Ազրպէյճանի դէմ պատերազմը 1991-1994 թթ.-ին, կամ երբ ան կը պարտուէր 2020 թ.-ին: Այն, ինչ չպատահեցաւ, երբ կարող էր պատահիլ կամ ըստ վերլուծման՝ պէտք էր պատահեր ու չպատահեցաւ, նոյնքան կարելոր է, որքան այն, ինչ պատահեցաւ»⁶⁹: Այս պարագայում ևս Ժ. Լիպարիտյանի վերլուծությունները առ այն, որ 2020-ը և դրանից հետոյի գործընթացները ապացույցն են Թուրքիայի չեզոքության

⁶⁸ Նույն տեղում, էջ 210:

⁶⁹ Նույն տեղում, էջ 428:

և Հայաստանի վրա չհարձակվելու ցանկության, մեկնաբանման ենթակա չեն այդ մտքերում տրամաբանության և փաստագրական հիմնավորվածության բացակայության պատճառով:

Ամփոփելով Ժիրայր Լիպարիտյանի «Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն» գրքի գրախոսությունը՝ ևս մեկ անգամ արձանագրենք ակնհայտ թերացումները, սխալները, ոչ իրական Թուրքիայի գիտակցված կամ չիմացության հետևանքով պատկերելու փորձերը, հայկական քաղաքական որոշակի շրջանակների հանդեպ հեղինակի անսքող բացասական և էմոցիոնալ վերաբերմունքը, կատեգորիկ գնահատականները և այլն: Գիրքը ժանրային առումով այդպես էլ մնում է անորոշ. այն Թուրքիան գովելուն և Հայաստանի ներկայիս իշխանություններին աջակցելուն միտված քարոզչական աշխատանք է, գիտնականի կամ փորձագետի վերլուծություն, թե՛ պաշտոնավարման ընթացքում կուտակված բարդույթների և չարության արտահայտման յուրահատուկ հարթակ:

Գրքում այն Թուրքիան, որը ներկայացնում է 2018 թվականից Հայաստանում իշխող ուժի «խաղաղության կոնցեպտի» գաղափարական կնքահայր կամ «պրագմատիզմի առաքյալ» Ժիրայր Լիպարիտյանը, իրականում գոյություն չունի: Լիպարիտյանի «Հայաստան-Թուրքիա. պետականություն, պատմություն, քաղաքականություն» գիրքը ծայրահեղական և հաճախ անհիմն թեզերի ու դրանց ոչ գիտական հիմնավորումներով ներկայացնելու փորձ է: Գրքի բնույթը կարելի է որակել որպես հայկական հասարակությանը շատ կարևոր և ճակատագրական թեմայի շուրջ ապակողմնորոշող, քարոզչական աշխատանք, որը միտված է ապահովելու այսպես կոչված «խաղաղության դարաշրջանի» գաղափարախոսական հենքը:

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ»
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

**(Ժիրայր Լիպարիտյանի
«Հայաստան-Թուրքիա. պետականություն,
պատմություն, քաղաքականություն»
գրքի թուրքագիտական գրախոսություն)**